Մորմոնի Գիրք

Դասարանի Անդամի Ուսուցման Ուղեցույց

Դիտողություններ և Առաջարկություններ

Այս ուղեցույցի վերաբերյալ ձեր դիտողությունները և առաջարկությունները կգնահատվեն: Խնդրում ենք ուղարկել դրանք հետևյալ հասցեով.

Curriculum Planning
50 East North Temple Street, Floor 24
Salt Lake City, UT 84150-3200
USA
E-mail: cur-development@ldschurch.org

Նշեք ձեր անունը, հասցեն, ծուխը և ցիցը: Մի մոռացեք նշել ուսուցման ուղեցույցի վերնագիրը: Այնուհետև ներկայացրեք ձեր դիտողությունները և առաջարկությունները, նշելով ուղեցույցի կայուն կետերը և բարելավման կարիք զգացող հատվածները:

Հրատարակված է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կողմից
Սոլթ Լեյք Սիթի, Յուտա

© 2002 by Intellectual Reserve, Inc.

Բոլոր իրավունքները վերապահված են

Printed in the United States of America

Անգլերեն տեքստի հաստատումը. 8/96
Թարգմանության հաստատումը. 8/96

Book of Mormon: Class Member Study Guide-ի թարգմանությունը

35684 201
Armenian East

Ներածություն

Տասներկու Առաքյալների հետ հանդիպման ժամանակ Մարգարե Ջոզեֆ Սմիթն ասաց «եղբայրներին, որ Մորմոնի Գիրքը ամենաճիշտն է երկրի վրա եղած բոլոր գրքերից և մեր կրոնի պորտաքարն է, և մարդն ավելի կմոտենար Աստծուն ապրելով ըստ նրա ցուցումների, քան՝ ըստ որևէ այլ գրքի» (*History of the Church,* 4:461; տե՛ս նաև Մորմոնի Գրքի Նախաբանը):

Ուսուցման այս ուղեցույցը նախատեսված է լինելու մեր ուղեկիցը Մորմոնի Գրքի ուսումնասիրման ժամանակ: Ուղեցույցը բաղկացած է համարակալված բաժիններից, որոնք համապատասխանում են Մորմոնի Գրքի Ավետարանի Վարդապետության դասերին: Յուրաքանչյուր բաժնում տրվում է շաբաթվա համար ընթերցանության հանձնարարությունը և նախատեսված հարցերը խորացված ուսումնասիրության համար: Այդ հարցերը կարող են ձեզ օգնել կիրառել սուրբ գրությունները և պատրաստվել դասարանային քննարկումներին՝ իմաստալից մասնակցություն ցուցաբերելու:

Ավետարանի Վարդապետության ձեր ուսուցչի հետ միասին դուք կիսում եք դասարանի հաջողության պատասխանատվությունը: Տերն ասել է, որ ուսուցիչները պետք է քարոզեն ճշմարտության Հոգով և նրանք, ովքեր ընդունում են ճշմարտության խոսքը պետք է ընդունեն այն ճշմարտության Հոգով (տե՛ս Վ և Ու 50.17, 19): Դասին նախապատրաստված եկեք, որպեսզի կիսվեք մտքերով, համապատասխան փորձով, հարցերով, բերեք ձեր վկայությունը և լսեք ուսուցչին և դասարանի անդամներին: Ընթերցանության հանձնարարությունները ուսումնասիրելուց և հարցերի շուրջ մտածելուց հետո դուք ավելի լավ պատրաստ կլինեք հասկանալու Տիրոջ խոսքերի նշանակությունը, երբ Նա ասել է, որ նա, որ սովորեցնում է, և նա, ով ընդունում է, հասկանում են միմյանց, և երկուսը խրատվում և ուրախանում են միասին (տե՛ս Վ և Ու 50.22):

Ուսուցման այս ուղեցույցը թանկարժեք նյութ է ընտանիքների համար: Կարող եք ուսումնասիրել հարցերը ընտանիքի անդամների հետ ավետարանի շուրջ քննարկումներ զարգացնելու համար: Բացի դա, յուրաքանչյուր բաժին պարունակում է առաջարկություն ընտանեկան քննարկման համար: Ընտանիքի անդամները կարող են օգտվել այդ առաջարկություններից, երբ նախապատրաստում են ընտանեկան երեկոների դասերը:

«Մեր կրոնի պորտաքարը» 1

Աղոթքով ուսումնասիրեք հետևյալ սուրբ գրությունները. 1 Նեփի 13.38–41; 19.23; 2 Նեփի 25.21–22; 27.22; 29.6–9; Մորմոն 8.26–41; Եթեր 5.2–4; Մորոնի 1.4; 10.3–5; Վարդապետություն և Ուխտեր 10.45–46; 20.8–12; 84.54–58: Ուսումնասիրեք Մորմոնի Գրքի նախաբանը:

- Համաձայն Մորմոնի Գրքի վերնագրի էջի երկրորդ պարբերությանը, որո՞նք են Մորմոնի Գրքի երեք նպատակները:
- Ի՞նչ սովորեցիք Մորմոնի Գրքից Հիսուս Քրիստոսի մասին: Ինչպե՞ս Մորմոնի Գիրքը ամրացրեց ձեր վկայությունը Հիսուս Քրիստոսի մասին:

- Մորմոնի Գրքի ո՞ր հատվածներն են առավել ոգեշնչող ձեզ համար:

Առաջարկություն ընտանեկան քննարկման համար

Ընտանիքով կարդացեք Նախագահ Մարիոն Գ. Ռոմնիի խոսքերը.

«Ես համոզված եմ, որ, եթե մեր տներում ծնողները աղոթքով կանոնավոր կերպով կարդան Մորմոնի Գիրքը, ինչպես երկուսով, այնպես էլ երեխաների հետ, այդ մեծ գրքի հոգին կթափանցի մեր տները և կներգործի բոլոր նրանց վրա, ովքեր ապրում են այդ տանը: Պատկառանքի ոգին կաճի, փոխադարձ հարգանքը և միմյանց նկատմամբ ուշադրությունը կավելանա: Հակառակությունների ոգին կհեռանա: Ծնողները ավելի մեծ սիրով և իմաստությամբ խորհուրդ կտան իրենց զավակներին: Զավակները ավելի պատրաստակամորեն կընդունեն ծնողների խորհուրդները: Արդարությունը կգերազանցի: Հավատը, հույսը և գթությունը՝ Քրիստոսի անարատ սերը, կտիրի մեր տներում և կյանքում, պարգևելով խաղաղություն, ուրախություն և երջանկություն» (in Conference Report, Apr. 1980, 90; or *Ensign,* May 1980, 67):

Խոսեք այն օրհնությունների մասին, որոնք տրվում են ձեր ընտանիքին, երբ դուք հետևում եք այս խորհրդին: Ծրագիր կազմեք Մորմոնի Գիրքը ընտանիքով ամեն օր ուսումնասիրելու համար: Ընտանիքի յուրաքանչյուր անդամի խրախուսեք պատասխանատվությամբ հետևել ծրագրին:

«Բոլոր բաները՝ ըստ Իր կամքի» 2

1 Նեփի 1–7

- Մորմոնի Գրքում նկարագրված առաջին իրադարձություններից է Երուսաղեմից Լեքիի և նրա ընտանիքի հեռանալը: Ինչպիսի՞ հանգամանքներ ստիպեցին նրանց հեռանալ: (Տե՛ս 1 Նեփի 1.4–15, 18–20; 2.1–3:)
- Ինչո՞ւ Երուսաղեմի ժողովուրդը չընդունեց Լեքիի և այլ մարգարեների ուղերձը: (Տե՛ս 1 Նեփի 1.19–20; 2.12–13; 16.1–2:) Ինչո՞ւ այսօր շատ մարդիկ ըմբոստանում են Տիրոջ և Նրա ծառաների դեմ: Ի՞նչ կարող եք սովորել Նեփիից այն մասին, թե ինչպես ձեր սիրտը ավելի ընկալունակ դարձնել մարգարեների ուսմունքների համար: (Տե՛ս 1 Նեփի 2.16, 19:)
- Ինչո՞ւ էին արույրե թիթեղներն անհրաժեշտ Լեքիի ընտանիքի համար: (Տե՛ս 1 Նեփի 3.3, 19–20; 4.15–16; տե՛ս նաև 1 Նեփի 5.21–22; Մոսիա 1.3–7:)

1 Նեփի 2–4 ուսումնասիրելիս համեմատեք Նեփիին Լամանի և Լեմուելի հետ: Կարող եք հատուկ ուշադրություն դարձնել հետևյալ հատվածների վրա. 1 Նեփի 1.1; 2:11–13, 16, 19; 3.5, 7, 14–15, 31; 4.1, 3:

Առաջարկություն ընտանեկան քննարկման համար

Քննարկեք, թե ինչու Լեքիի ընտանիքը պետք է ձեռք բերեր արույրե թիթեղները: Խոսեք այն մասին, թե ինչու եք դուք շնորհակալ սուրբ գրությունների համար: Այնուհետև ընտանիքի անդամներին խնդրեք կազմել այն ընկերների ցուցակը, որոնք չունեն Մորմոնի Գիրքը: Աղոթքով մտածեք այն եղանակների մասին, որոնց միջոցով կարող եք Մորմոնի Գրքի օրինակներ տալ այդ մարդկանց: Կարող եք ընտանիքի յուրաքանչյուր անդամի տալ Մորմոնի Գրքի մեկական օրինակ ընկերներին նվիրելու համար:

Կենաց ծառի տեսիլքը 3

1 Նեփի 8–11; 12.16–18; 15

Ուսումնասիրելով կենաց ծառի տեսիլքի պատմությունը, գտեք հետևյալ խորհրդանիշները և դրանց իմաստները.

Կենաց ծառ (1 Նեփի 8.10; 11.8-25)
Կենաց ծառի պտուղ (1 Նեփի 8.10-18, 30; 15.36; տե՛ս նաև Վ և Ու 14.7)
Երկաթյա ձող (1 Նեփի 8.19-24, 30; 11.25; 15.23-24)
Խավարի մեգ (1 Նեփի 8.23-24; 12.17)
Կեղտոտ ջրերի գետ (1 Նեփի 8.13, 26, 32; 15.26-29)
Մեծ և ընդարձակ շենք (1 Նեփի 8.26–28, 31, 33; 12.18)

- Երբ Նեփին տեսավ կենաց ծառը, նա խնդրեց, որ իմանա դրա մեկնաբանությունը (1 Նեփի 11.8–11): Ի՞նչ նա սովորեց ծառի իմաստի մասին: (Տե՛ս 1 Նեփի 11.21–25:) Ի՞նչ Նեփին տեսավ և ինչպե՞ս դա օգնեց նրան ավելի լավ հասկանալ Աստծո սերը: (Տե՛ս 1 Նեփի 11.13–21, 24, 26–33; տե՛ս նաև Հովհաննէս Գ.16:)
- Ինչպե՞ս Լեքին և Նեփին նկարագրեցին կենաց ծառը և դրա պտուղը: (Տե՛ս 1 Նեփի 8.10–12; 11.8–9, 23; 15.36:)
- Տեսիլքում Լեքին տեսավ «մարդկանց անհամար բազմություններ» (1 Նեփի 8.21): Այդ մարդկանց կարելի է բաժանել չորս խմբի, կախված նրանից, թե ինչպես են նրանք վերաբերվում ծառին և պտղին: Կարդացեք 1 Նեփի 8.21–33, և գտեք այդ չորս խմբերը: Ինչպե՞ս են այդ խմբերը դրսևորում իրենց այսօր աշխարհում: Ձեր կարծիքով, ո՞ր խմբին եք պատկանում դուք:

Առաջարկություն ընտանեկան քննարկման համար

Կազմակերպեք հետևյալ միջոցառումը օգնելու համար ընտանիքի անդամներին ավելի լավ հասկանալ կենաց ծառի տեսիլքը:

Կապեք ընտանիքի անդամներից մեկի աչքերը և մի քանի անգամ պտտեք նրան: Բացատրեք, որ կապը ներկայացնում է խավարի մեգը: Այնուհետև սենյակում որևէ տեղ տեղավորեք Փրկչի նկարը: Աչքերը կապած ընտանիքի անդամին առանց որևէ մեկի օգնության առաջարկեք գնալ դեպի նկարը: Երբ պարզ դառնա, որ նա չի կարող գնալ ուղիղ նկարի մոտ, ընտանիքի որևէ անդամի խնդրեք կանգնել նկարի կողքին, բռնելով երկաթյա ձողը ներկայացնող պարանի ծայրը: Ընտանիքի որևէ այլ անդամի խնդրեք բռնել երկրորդ ծայրը: Այնուհետև աչքերը կապած անդամին խնդրեք պարանից բռնվելով հասնել նկարին:

«Բաները, որոնք ես տեսա մինչ հեռու էի տարվել՝ հոգով» 4

1 Նեփի 12–14

- Նեփի 12–րդ գլխում Նեփին նկարագրում է իր և իր եղբայրների սերմի (սերունդների) ապագայի մասին տեսիլքը: Ինչպե՞ս էին կենաց ծառի տեսիլքի խորհրդանիշները (խավարի մեգը, մեծ և ընդարձակ շենքը և կեղտոտ ջրերի գետը) կանխատեսում Նեփիի սերմի անկումը:
- Ըստ Նեփիի տեսիլքի ի՞նչ ձևավորվեց «Հեթանոսների ազգերի մեջ»:

(Տե՛ս 1 Նեփի 13.4–5:) Ո՞վ է մեծ և գարշելի եկեղեցու հիմնադիրը: (Տե՛ս 1 Նեփի 13.6:)

- Ինչպե՞ս վարվեց մեծ և ընդարձակ շենքը Աստվածաշնչի հետ: (Տե՛ս 1 Նեփի 13.20–26:) Ինչո՞ւ: (Տե՛ս 1 Նեփի 13.27:) Որո՞նք են Աստվածաշնչի այն ուսմունքները, որոնք դժվար են հասկացվում, սակայն պարզ և թանկարժեք են Մորմոնի Գրքում: Ինչպե՞ս է Մորմոնը Գիրքն օգնել ձեզ ավելի լավ հասկանալ Աստվածաշունչը կամ զորացրել Աստվածաշնչի մասին ձեր վկայությունը:
- Նեփին տեսավ, որ, թեպետև Տիրոջ Եկեղեցում անդամների թիվը վերջին օրերին համեմատաբար քիչ է լինելու, նրանք ի վիճակի կլինեն հաղթահարել մեծ և գարշելի եկեղեցու հալածանքները: Ինչպե՞ս էին զինված Աստծո Սրբերը Նեփիի տեսիլքում: (Տե՛ս 1 Նեփի 14.14:) Ինչպե՞ս կարող եք դուք «զինվել արդարությամբ և Աստծո զորությամբ»:

Առաջարկություն ընտանեկան քննարկման համար

Ամբողջ ընտանիքով կարդացեք ընտրված հատվածները 1 Նեփի 12–14-ից: Այս գլուխներն ուսումնասիրելիս հատուկ ուշադրություն դարձրեք Նեփիի մարգարեություններին: Ընտանիքի անդամներին առաջարկեք իրենց սուրբ գրություններում նշել այդ մարգարեությունները: Կազմեք այն մարգարեությունների ցուցակը, որոնք իրականացել են:

«Ականջ դնել ճշմարտությանը և ուշք դարձնել դրան» 5

1 Նեփի 16–22

1 Նեփի 16–18 գլուխներն ուսումնասիրելիս գտեք այն եղանակները, որոնց միջոցով Նեփին դրսևորեց հնազանդություն, հավատ և քաջություն: Մտածեք, թե ինչպես կարող եք հետևել Նեփիի օրինակին:

- Փորձությունների ժամանակ Նեփիի արձագանքն ինչպե՞ս էր տարբերվում իր ընտանիքի շատ անդամների արձագանքից: (Համեմատեք 1 Նեփի 18.16 և 1 Նեփի 16.18–20, 34–36; 17.21:) Փորձությունների հանդիպելիս ինչպե՞ս մենք կարող ենք հաղթահարել տրտնջալու մեր հակվածությունը:

Ուսումնասիրեք Աստծո պատվիրաններին հնազանդվելու մասին հետևյալ սուրբ գրությունները: Կարող եք նշել այդ հատվածները:

1 Նեփի 3.7
1 Նեփի 17.3
Վ. և Ու. 82.10
Վ և Ու 130.20–21
Աբրահամ 3.25

Առաջարկություն ընտանեկան քննարկման համար

Գտեք երկու պարան՝ մեկը լավ վիճակում, մյուսը՝ մաշված և պատառոտված: Ցույց տվեք լավ վիճակում գտնվող պարանը և բացատրեք, որ այն բաղկացած է շատ թելերից: Բացատրեք, որ ինչպես պարանի ամրության համար հարկավոր է, որպեսզի թելերը միասին գործված լինեն, այնպես էլ ընտանիքների համար է կարևոր միասին լինելը: Այնուհետև ցույց տվեք մաշված-պատառոտված պարանը: Բացատրեք, որ ինչպես պարանն է թուլանում, երբ թելերը առանձնանում են, այնպես էլ ընտանիքներն են թուլանում, երբ ընտանիքի անդամները միասնական չեն լինում:

Վերանայեք 1 Նեփի 16–18: Մտածեք այն մասին, թե ինչպես Լեքիի ընտանիքի առանձին անդամների գործերը ներգործեցին ընտանիքի միասնության վրա: Քննարկեք, թե ինչ կարող է անել ձեր ընտանիքը ավելի միասնական լինելու համար:

«Ազատ են՝ ընտրելու ազատություն և հավերժական կյանք» 6

2 Նեփի 1–2

2 Նեփի 1գլուխը պարունակում է Լեքիի խորհուրդը, որը նա տվեց իր որդիներին իր մահից առաջ: Այս գլուխն ուսումնասիրելիս գտեք այն հատուկ խորհուրդները, որոնք Լեքին տվեց իր որդիներին, և այն օրհնությունները, որոնք նրանք կարող են ստանալ, եթե հետևեն իր խորհրդին:

2 Նեփի 2 գլուխն ուսումնասիրելիս գտեք *ազատ, գործել* և *ընտրել* բառերը: Կարող եք նշել այդ բառերը: Ժամանակ տրամադրեք այդ բառերի կարևորության մասին մտածելու համար:

- Կարդացեք 2 Նեփի 2.6–8: Ինչպե՞ս կարող եք «այս բաները հայտնի դարձնել»: Ինչպե՞ս դա կարող է ցույց տալ Փրկչի Քավության համար Նրա հանդեպ ձեր երախտագիտությունը:
- Կարդացեք 2 Նեփի 2.15–25 և գտեք (1) այն պայմանները, որոնք տիրում էին Ադամի և Եվայի ժամանակներում այն ամենից առաջ, երբ նրանք ճաշակեցին արգելված պտուղը, և (2) այն հակադրությունը, որին նրանք հանդիպեցին պտուղը ճաշակելուց հետո: Ի՞նչ օրհնություններ կարող եք դուք ստանալ Ադամի և Եվայի Անկման հետևանքով, որը հակադրություն բերեց այս աշխարհ: (Տե՛ս 2 Նեփի 2.23–27; Մովսես 5.10–12:)

Առաջարկություն ընտանեկան քննարկման համար

Բացատրեք, որ շատ հաճախ միսիոներներին ուղղում են հարցեր, որոնց պատասխանները հստակ տրված են Մորմոնի Գրքում: Դասարանի անդամներին խնդրեք խաղալ միսիոներների դերը, որոնց ուղղում են ստորև տրված հարցերը: Խնդրեք նրանց այդ հարցերին պատասխանել՝ օգտագործելով սուրբ գրությունների հատվածները 2 Նեփի 2-ից:

1. Ի՞նչ նկատի ունեք, երբ ասում եք, որ Հիսուսը Փրկիչն է: (Տե՛ս 2 Նեփի 2.5–10:)
2. Ինչո՞ւ է Աստված թույլ տալիս, որպեսզի աշխարհում լինի ինչպես բարին, այնպես էլ չարը: (Տե՛ս 2 Նեփի 2.11–13:)
3. Ես չեմ ցանկանում, որ շատ պատվիրաններ լինեն: Արդյոք Հիսուսի վարդապետությանը հետևելը չի՞ սահմանափակի իմ ազատությունը: (Տե՛ս 2 Նեփի 2.26–29:)

«Ես գիտեմ՝ ում եմ ապավինել» 7

2 Նեփի 3–5

- 2 Նեփի 3 գլուխն ուսումնասիրելիս գտեք Մարգարե Ջոզեֆ Սմիթի մասին ուսմունքները: Ինչպե՞ս եք դուք օրհնվել Ջոզեֆ Սմիթի ներդրման շնորհիվ:
- Ինչպե՞ս Նեփին հույսով լցվեց, չնայած որ «պարփակված էր գայթակղությամբ և մեղքով»: (Տե՛ս 2 Նեփի 4.18–25:) Անցյալում ստացած օրհնությունների մասին հիշելն ինչպե՞ս կարող է օգնել ձեզ դժվար պահերին:

Առաջարկություն ընտանեկան քննարկման համար

Ամբողջ ընտանիքով կարդացեք 2 Նեփի 4.15–35: Բացատրեք, որ այս հատվածը երբեմն կոչվում է «Նեփիի Սաղմոս»: Այն արտահայտում է Նեփիի որոշ խորը ապրումները: Քննարկեք, թե ինչու է երբեմն կարևոր «գրել հոգու բաները», ինչպես Նեփին գրեց (2 Նեփի 4.15): Ընտանիքի անդամներին խրախուսեք հաճախակի գրի առնել իրենց զգացմունքները: Երբեմն նրանք կարող են գրի առնել իրենց զգացմունքները բանաստեղծության կամ գովքի տեսքով:

«Օհ, որքան մեծ է բարությունը մեր Աստծո» 8

2 Նեփի 6–10

2 Նեփի 9 գլուխը պարունակում է Նեփիի փոքր եղբոր Հակոբի քարոզը Հիսուս Քրիստոսի Քավության մասին, որը փրկության ծրագրի կենտրոնական իրադարձությունն է: Այս գլխի ուսմունքները հասկանալու համար օգտակար է հասկանալ *Ժամանակավոր մահ և հոգևոր մահ* հասկացությունները:

- Ի՞նչ արեց Փրկիչը ժամանակավոր մահը և հոգևոր մահը հաղթահարելու համար: (Տե՛ս 2 Նեփի 9.5–7, 12, 21–22; տե՛ս նաև Ղուկաս ԻԲ.44; Մոսիա 3.7; Վ և Ու 19.16–19:)
- Ըստ Հակոբի ի՞նչ մենք պետք է անենք, որպեսզի փրկվենք Աստծո արքայությունում, կամ կարողանանք ընդմիշտ բնակվել Աստծո ներկայության մեջ: (Տե՛ս 2 Նեփի 9.18, 21, 23–24, 39, 41, 50–52:)
- Ինչպիսի՞ վերաբերմունք և գործեր կարող են խնայարել մեզ ստանալ Քավության բոլոր օրհնությունները: (Տե՛ս 2 Նեփի 9:.7–38:)
- Հակոբը մարգարեացավ, որ Նեփիացիների սերունդները «կոչնչանան մարմնում՝ անհավատության պատճառով» և Երուսաղեմի հրեաները կխաչեն Փրկչին և կցրվեն իրենց մեղքերի պատճառով (2 Նեփի 10.2–6): Ի՞նչ Տերը կանի մարդկանց համար, երբ նրանք հավատան Նրան և ապաշխարեն իրենց մեղքերը: (Տե՛ս 2 Նեփի 10.2, 7–8, 21–22; տե՛ս նաև 1 Նեփի 21.15–16; 2 Նեփի 9.1–3, 53; 30.2:) Որքանո՞վ է սա վերաբերվում մեզանից յուրաքանչյուրին:

Մտածեք, թե ինչպես կարող են հետևյալ հատվածների առանձին խոսքերը և արտահայտությունները օգնել ավելի լավ հասկանալ Հակոբի քարոզի իմաստը:

2 Նեփի 9.10
2 Նեփի 9.14
2 Նեփի 9.18
2 Նեփի 9.28
2 Նեփի 9.39
2 Նեփի 9.51

Առաջարկություն ընտանեկան քննարկման համար

Ընտանիքի անդամներին խնդրեք քննարկել այն ամենը, ինչ Փրկիչն արել է իրենցից յուրաքանչյուրի և իրենց ընտանիքի համար:

«Իմ հոգին հրճվում է Եսայիայի խոսքերից» 9

2 Նեփի 11–25

2 Նեփի 11–25 գլխում տրված Եսայիայի ուսմունքները ուսումնասիրելուց առաջ կարդացեք Երեց Բոյդ Ք. Փաքերի խոսքերը.

«Մորմոնի Գիրքը սուրբ գրությունների գիրք է: Այն ևս մեկ վկայություն է Հիսուս Քրիստոսի մասին: Այն գրված է աստվածաշնչյան լեզվով, մարգարեների լեզվով:

Հիմնականում, այն գրված է հեշտ կարդացվող Նոր Կտակարանի լեզվով, այնպիսի խոսքերով, ինչպիսիք են՝ *և եղավ այնպես, ուստի,* և այլն:

Ձեզ պետք չէ էջեր կարդալ, մինչև կսկսեք հասկանալ լեզվական ռիթմը, և պատմողական ոճը հեշտ կլինի հասկանալ: Իրականում, շատ դեռահասներ հեշտությամբ հասկանում են Մորմոնի Գրքի պատմողական ոճը:

Այնուհետև, երբ դուք հարմարվում եք, ակնկալելով, որ հեշտությամբ առաջ կգնաք, հանկարծակի խոչընդոտի եք հանդիպում: Լեզվական պարզ ոճը փոխվում է, և նրան հետևում է Հին Կտակարանի ոճը: Պատմողական ոճում զանազանություններ

մտցնող գլուխներից են Հին Կտակարանի մարգարե Եսայիայի մարգարեությունները մեջբերող գլուխները: Դրանք դառնում են խոչընդոտ, ինչպես մի ճանապարհի մեծ քար կամ ստուգման կետ, որից հետո զուտ հետքրքասիրություն ունեցող հասարակ ընթերցողը չի շարունակի:

Դուք նույնպես կհանդիպեք տվյալ մասում կանգ առնելու փորձությանը, սակայն մի արեք դա: Մի դադարեք կարդալը: Առաջ գնացեք և կարդացեք Հին Կտակարանի այդ դժվար հասկանալի գլուխները, անգամ եթե դրա միայն փոքր մասն եք հասկանում: Առաջ գնացեք, եթե անգամ միայն աչքի եք անցկացնում և տարբեր հատվածներից լոկ արտահայտություններ եք «քաղում»: Առաջ գնացեք, եթե անգամ պարզապես նայում եք խոսքերին . . .

. . . Տերը հատուկ նպատակով է պահպանել Եսայիայի մարգարեությունները Մորմոնի Գրքում, թեև դրանք հիրավի խոչընդոտ են հասարակ ընթերցողի համար:

Նրանք, ովքեր երբեք չեն անցնում Եսայիայի գլուխներից այն կողմ, կորցնում են այդ ճանապարհին իրենց սպասվող անձնական գանձերը» (in Conference Report, Apr. 1986, 76–77; or *Ensign,* May 1986, 61):

«Նա հրավիրում է նրանց բոլորին գալ Իր մոտ» 10

2 Նեփի 26–30

2 Նեփի 26–30 գլուխները պարունակում են հզոր մարգարեություններ վերջին օրերի մասին: Նեփին մարգարեանում էր այն մարդկանց մասին, ովքեր կխաբվեն Սատանայի կողմից և կշեղվեն ճշմարտությունից: Այնուամենայնիվ, նա կանխատեսեց ավետարանի Վերականգնումը և այն օրհնությունները, որոնք տրվելու են արդարներին:

- 2 Նեփի 28-ում ինչպիսի՞ եղանակներ ենք գտնում, որոնցով Սատանան փորձում է խաբել մեզ: Ինչպե՞ս կարող եք խուսափել այդ խորամանկություններից: (Տե՛ս, օրինակ, 1 Նեփի 15.24; 2 Նեփի 28.30; Ալմա 17.2–3; Մորոնի 7.15–19; Վ և Ու 21.1–6; 46.7:)
- Ինչո՞ւ Աստվածաշնչի հետ մեկտեղ մենք պետք է ուսումնասիրենք Մորմոնի Գիրքը ևս: (Տե՛ս 2 Նեփի 29.4–14; տե՛ս նաև 2 Նեփի 28.30:)

Առաջարկություն ընտանեկան քննարկման համար

Ընտանիքի անդամներից որևէ մեկին խնդրեք կանգնել սենյակի կենտրոնում: Բացատրեք, որ այդ անձի աջ կողմը ներկայացնում է բոլոր այն ճիշտ բաները, որ կարող են արվել կյանքում: Աջից ամենահեռու հատվածը ներկայացնում է ամենաճիշտ բաները: Անձի ձախ կողմը ներկայացնում է այն սխալ բաները, որ կարող են կատարվել կյանքում: Ձախից ամենահեռու տարածքը ներկայացնում է ամենասխալ բաները:

Բացատրեք, որ Երեց Ռիչարդ Գ. Սքոթը նման առարկայական դաս է վարել: Այնուհետև նա նկատել է. «Մեջտեղում դժվար է տարբերել, որն է ճիշտ, որը՝ սխալ: Այդ միջին հատվածում է Սատանան աշխատում արդար մարդկանց վրա . . . Հեշտ է այդտեղ շփոթվել: Ապրեք բարի բաների այդ հրաշալի հատվածում, որ Տերը սահմանել է ձեզ համար, և դուք երբեք խնդիր չեք ունենա գայթակղության հետ: Եթե դուք համոզված չեք, արդյոք պատշա՞ճ է որևէ բան նայել, լսել, մտածել որևէ բանի մասին կամ որևէ բան անել, ապա, պարզապես, խուսափեք դրանից: Դուք կարող եք ընկնել Սատանայի ծուղակներից մեկը» (“Do What Is Right,” *Ensign,* June 1997, 53–54):

Քննարկեք, թե ինչպես կարող է այս ներկայացումը կիրառվել, երբ ընտանիքի անդամները ամեն օր հանդիպում են փորձությունների և պետք է որոշումներ կատարեն:

«Առաջ մղվեք Քրիստոսի հանդեպ հաստատամտությամբ» 11

2 Նեփի 31–33

- Նեփին իր վերջին գրառումները սկսում է, ասելով, «պիտի խոսեմ Քրիստոսի վարդապետության վերաբերյալ» (2 Նեփի 31.2): Հիմնվելով 2 Նեփի 31-ում տրված Նեփիի ուսմունքների վրա, ինչպե՞ս դուք կսահմանեք «Քրիստոսի վարդապետությունը»:

Առաջարկություն ընտանեկան քննարկման համար

Նախապատրաստեք ճաշի սեղանը և ընտանիքի անդամներին հայտարարեք, որ նրանց կմատուցեք ուտելիքը: Երբ ընտանիքի անդամները նստեն սեղանի շուրջը, մատուցեք ուտելիքը, սակայն յուրաքանչյուրի բաժինը դնելով շատ ավելի քիչ, քան նրանք սովորաբար ուտում են: Այնուհետև զարգացրեք հետևյալ քննարկումը.

- Սուրբ գրությունների ուսումնասիրությունը ինչպես կարելի է համեմատել փոքր բաժիններով սնունդ ընդունելու հետ:
- Ընտանիքով կարդացեք 2 Նեփի 32.3: Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում «սնվեք Քրիստոսի խոսքերով» (2 Նեփի 32:3): Ի՞նչ մենք կարող ենք անել, որպեսզի սուրբ գրությունների անհատական և ընտանեկան ուսումնասիրությունը «սնվել» դարձնենք:

«Դուք որոնեք Աստծո՛ արքայությունը» 12

Հակոբ 1–4

Հակոբ մարգարեի մասին ավելի շատ սովորելու համար կարդացեք հետևյալ հատվածները. 1 Նեփի 18.7; 2 Նեփի 2.1–4; 6.2–4; Հակոբ 1.1–2, 18–19:

- Հակոբ մարգարեն նախազգուշացրեց հարստության հանդեպ սիրո, հպարության, անբարոյականության և ռասայական նախապաշարմունքների վտանգի մասին (Հակոբ 2.12–16, 22–23; 3.5, 9): Իր ժողովրդին ապաշխարության կոչ անելուց հետո նա ավարտեց իր քարոզը վկայելով ներման հույսի մասին, որը գալիս է Քավության միջոցով: Ինչպե՞ս մենք կարող ենք ձեռք բերել Քրիստոսի հանդեպ հույսը, որի մասին խոսում էր Հակոբը: (Տե՛ս Հակոբ 4.4–12:)

Հակոբը նախատեց Նեփիացի տղամարդկանց իրենց կանանց և երեխաների հանդեպ վատ վերաբերմունքի համար (Հակոբ 2.9, 31–32, 35): Վերջին Օրերի Եկեղեցու ղեկավարները նույնպես խիստ նախազգուշացնում են ցանկացած տեսակի բռնության մասին: Առաջին Նախագահությունը և Տասներկու Առաքյալների Քվորումը նախազգուշացրել է, որ «ողջախոհության օրենքները խախտող անձիք, որոնք բռնություն են գործադրում իրենց կանանց կամ երեխաների հանդեպ, կամ չեն կատարում իրենց ընտանեկան պարտականությունները, մի օր պատասխան կտան Աստծո առաջ» (“The Family: A Proclamation to the World,” *Ensign,* Nov. 1995, 102):

Առաջարկություն ընտանեկան քննարկման համար

Ընտանիքի անդամներին խնդրեք կարդալ Հակոբ 2.35: Այնուհետև առաջարկեք հետևյալ հարցերը.

- Ի՞նչ մենք կարող ենք անել կամ ասել, որը կկոտրի ուրիշների սրտերը: Ի՞նչ մենք կարող ենք անել մեծացնելու համար մեր տանը տիրող սերը և միասնությունը:

Ձիթենու ծառերի այլաբանությունը 13

Հակոբ 5–7

Հակոբ 5–ում գրված է Մորմոնի Գրքում մի քանի անգամ նշված եբրայեցի մարգարե Զենոսի այլաբանությունը: Գրականության մեջ այլաբանությունն օգտագործվում է որևէ առարկայի կամ իրադարձության միջոցով որևէ այլ առարկա կամ իրադարձություն նկարագրելու համար: Հետևյալ սխեման կօգնի ձեզ ավելի լավ հասկանալ այլաբանության գաղափարը.

Խորհրդանիշ	Իմաստը
Այգի	Աշխարհ
Այգու տերը	Հիսուս Քրիստոս
Ընտանի ձիթենու ծառ	Իսրայելի տունը, Տիրոջ ուխտյալ ժողովուրդը
Վայրի ձիթենու ծառ	Հեթանոսներ (մարդիկ, որոնք ծնված չեն Իսրայելի տնից)
Ճյուղեր	Մարդկանց խմբեր
Ծառաներ	Մարգարեներ և ծառայության կանչված այլ մարդիկ
Պտուղ	Մարդկանց կյանքը և գործերը

Առաջարկություն ընտանեկան քննարկման համար

Բացատրեք, որ Հակոբ 5.61–72–ում նշված ծառաները Վերջին Օրերի Սրբեր են, որոնք քարոզում են ավետարանը (Վ և Ու 133.8): Քննարկեք այն եղանակները, որոնց միջոցով առօրյա կյանքում ընտանիքի անդամները կարող են պատրաստվել քարոզել ավետարանը որպես լիաժամկետ միսիոներներ: Նպատակ դրեք, որը ընտանիքի անդամներին կօգնի ավելի լավ պատրաստվել միսիոներական աշխատանքին:

«Իմաստուն նպատակի համար» 14

Ենովս, Հարոմ, Օմնի, Մորմոնի Խոսքերը

- Ինչպե՞ս Ենովսը նկարագրեց Տիրոջն ուղղված իր աղոթքը: (Տե՛ս Ենովս 1:2:) Ներում փնտրելու նրա փորձը ի՞նչ է մեզ սովորեցնում ապաշխարելու մասին: Ի՞նչ է նրա փորձը մեզ սովորեցնում աղոթքի մասին:
- Ինչպե՞ս մենք կարող ենք «մատուցել [մեր] ողջ հոգիները որպես ընծա» առ Փրկիչը (Օմնի 1:26):
- Ի՞նչ ասաց Մորմոնը սրբազան հիշատակարանի նպատակի մասին, որը նա կրճատում էր: (Տե՛ս Մորմոնի Խոսքերը 1.2, 8; տե՛ս նաև Մորմոնի Գրքի տիտղոսաթերթը:) Ինչո՞ւ է կարևոր կարդալ Մորմոնի Գիրքը, մտքում ունենալով այդ նպատակը:

Առաջարկություններ ընտանեկան քննարկման համար

Բացատրեք, որ Ենովսի, Հարոմի և Օմնիի գրքերը գրողներին պատվիրան էր տրվել՝ պահպանել իրենց ժողովրդի հիշատակարանը և լրացումներ կատարել դրա մեջ: Վերջին Օրերի Սրբերին նույնպես խորհուրդ է տրվել գրի առնել անձնական, ընտանեկան և ժողովրդի պատմությունը: Եթե ձեզ մոտ պահպանվել է ձեր նախնիներից մեկի օրագիրը, կարդացեք դա ամբողջ ընտանիքով: Քննարկեք անձնական օրագրեր վարելու և ընտանեկան պատմությունը գրելու կարևորությունը:

«Հավերժ պարտական եք ձեր Երկնային Հորը» 15

Մոսիա 1–3

- Բենիամին թագավորի կառավարման ժամանակ ո՞րն էր տարբերությունը սուրբ գրությունները ուսումնասիրող Նեփիացիների և դրանք չուսումնասիրող Լամանացիների միջև: (Տե՛ս Մոսիա 1.5:) Ինչպե՞ս եք տեսնում այդ տարբերությունը ժամանակակից հասարակության մեջ:
- Կարդացեք Մոսիա 2.20–21, 34: Ի՞նչ է նշանակում լինել «անպիտան ծառաներ», որոնք «հավերժ պարտական են . . . Երկնային Հորը»: Ինչո՞ւ ենք մենք Աստծո համար անպիտան ծառաներ, անգամ, եթե փառք տանք և ծառայենք Նրան մեր ամբողջ հոգով: (Տե՛ս Մոսիա 2.22–25; տե՛ս նաև այս էջի վրա տրված նկարը:) Ի՞նչ է սա սովորեցնում մեր հանդեպ Երկնային Հոր սիրո մասին:
- Ի՞նչ եք դուք սովորում Հիսուս Քրիստոսի Քավության մասին Մոսիա 2–3–ից:

Առաջարկություն ընտանեկան քննարկման համար

Թղթի վրա նկարեք ստորև տրված սխեման:

Ընտանիքի անդամներին հարցրեք, թե ինչու է այս կշեռքը անհավասարակշիռ: Այնուհետև նրանց խնդրեք բարձրաձայն



կարդալ Մոսիա 2.20–25: Կարդալու ընթացքում նրանց խնդրեք գտնել այն զոհաբերությունները, որ մենք կարող ենք մատուցել Տիրոջը Նրա տված օրհնությունների դիմաց: Մեր զոհաբերությունները թվարկեք *Մեր Զոհաբերությունները* մասում: Աստծո օրհնությունները գրի առեք *Աստծո Օրհնությունները* մասում: Ընտանիքի անդամներին օգնեք հասկանալ, որ մենք միշտ պարտական կմնանք Նրան: Արտահայտեք ձեր երախտագիտությունը Աստծո օրհնությունների համար:

«Դուք կկոչվեք Քրիստոսի զավակներ» 16

Մոսիա 4–6

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ Բենիամին թագավորը շեշտեց, որ իր ժողովուրդը «ոչնչության» և արժեզուրկ վիճակում է: (Տե՛ս Մոսիա 4.5–8, 11–12:) Ինչո՞ւ է մեզ համար այդքան էական հասկանալ մեր կախվածությունը Տիրոջից:
- Համաձայն Բենիամին թագավորի, ի՞նչ պատասխանատվություն ունեն ծնողները իրենց զավակների հանդեպ: (Տե՛ս Մոսիա 4.14–15:)
- Բենիամին թագավորը իր ժողովրդին հրահանգ տվեց հոգ տանել կարիքավորների մասին (Մոսիա 4.16–17, 22): Ինչո՞ւ մենք «մեծ պատճառ ունենք ապաշխարելու», եթե չօգնենք կարիքավորներին: (Տե՛ս Մոսիա 4.18–23:) Ի՞նչ իմաստով ենք մենք բոլորս մուրացկաններ: (Տե՛ս Մոսիա 4.19–20:)
- Ի՞նչ խորհուրդ տվեց Բենիամին թագավորը աղքատներին, որոնք չեն

կարող բաժին հանել իրենց ունեցվածքից: (Տե՛ս Մոսիա 4.24–25:) Ինչպե՞ս դուք կարող եք գթասիրտ լինել անկախ ձեր ֆինանսական վիճակից:

- Բենիամին թագավորը իր ժողովրդին սովորեցնում էր, որ մեղքից խուսափելու և Աստծուն նվիրված մնալու համար նրանք պետք է հետևեն իրենց մտքերին, խոսքերին և գործերին (Մոսիա 4.29–30): Ինչպե՞ս են միմյանց կապված մտքերը, խոսքերը և գործերը:
- Ինչպե՞ս Տիրոջ Հոգին ներգործեց ժողովրդի վրա, երբ Բենիամին թագավորը խոսում էր նրանց հետ: (Տե՛ս Մոսիա 5.2–5:) Ինչպե՞ս կարող են մեր կյանքը և փոխհարաբերությունները փոխվել, եթե մենք «այլևս հակում չունենանք չարիք անելու»:
- Ի՞նչ է նշանակում դառնալ Քրիստոսի զավակները: (Տե՛ս Մոսիա 5.2, 5–7:) Ի՞նչ է նշանակում վերցնել մեզ վրա Քրիստոսի անունը: (Տե՛ս Մոսիա 5.8–11:) Ի՞նչ մենք կարող ենք անել ամեն օր, որպեսզի Քրիստոսի անունը գրված պահենք մեր սրտերում: (Տե՛ս Մոսիա 5.11–15:)

Առաջարկություն ընտանեկան քննարկման համար

Ընտանիքով կարդացեք Մոսիա 4.16–27: Քննարկեք, թե ինչ կարող եք միասին անել օգնելու կարիքի մեջ գտնվող մարդկանց: Կարող եք օգնության ծրագիր մշակել: Կարող եք նաև խոսել ծոմապահության նվիրատվությունների մասին և այն մասին, թե ինչպես են դրանք օգտագործվում:

«Տեսանողը . . . իր մերձավորների համար դառնում է մեծ բարիք» 17

Մոսիա 7–11

Մոսիա 7–11 ուսումնասիրելիս, գտեք այն հատվածները, որոնք սովորեցնում են, թե որքան կարևոր է հետևել այն մարդկանց հրահանգներին, որոնց Տերը կանչել է որպես մարգարեներ, տեսանողներ և հայտնություններ ստացողներ:

- Ինչպե՞ս է Ամմոնը նկարագրում տեսանողի դերը: (Տե՛ս Մոսիա 8.16–18:) Ինչպե՞ս էր Աբինադին կատարում տեսանողի դերը: (Գտեք հատուկ օրինակները Մոսիա 11-ում:)

Երբեմն, սուրբ գրություններից մենք լրացուցիչ ներշնչում կարող ենք ստանալ՝ համեմատելով միևնույն իրավիճակում գտնվող երկու տարբեր մարդկանց: Օգտագործեք հետևյալ սխեման Նոյ թագավորին Բենիամին թագավորի հետ համեմատելու համար.

Նոյ թագավորը	Բենիամին թագավորը
Մոսիա 11.2	Մոսիա 2.13
Մոսիա 11.3–4, 6	Մոսիա 2.12, 14
Մոսիա 11.5, 7	Մորմոնի Խոսքերը 1.17–18

Առաջարկություն ընտանեկան քննարկման համար

Բացատրեք, որ Առաջին Նախագահության և Տասներկու Առաքյալների Քվորումի անդամները մարգարեներ, տեսանողներ և հայտնություններ ստացող մարդիկ են: Քննարկեք, թե ինչպես են վերջին օրերի մարգարեները, տեսանողները և հայտնություններ ստացողները «մեծ բարիք» մեզ համար (Մոսիա 8.16–18): Այնուհետև կարդացեք Եկեղեցու Նախագահի վերջին կոնֆերանսի ժամանակ տրված ուղերձներից մեկը:

«Աստված ինքը . . . պիտի փրկագնի իր ժողովրդին» 18

Մոսիա 12–17

Մոսիա 12–17 գլուխներն ուսումնասիրելիս գտեք Աբինադիի ուղերձը՝ ուղղված Նոյ թագավորին և նրա քահանաներին: Մտածեք, թե ինչու էր Աբինադին պատրաստ զոհվելու այդ ուղերձը տեղ հասցնելու համար:

- Երբ Աբինադին դիմակայեց իրեն խաչելու քահանաների փորձերին, քահանաներից մեկը սուրբ գրությունների մի հատվածի վերաբերյալ հարց ուղղեց նրան (Մոսիա 12.19–24; տե՛ս նաև Եսայիա ԾԲ.7–10): Ինչո՞ւ քահանաներն ի վիճակի չէին հասկանալ սուրբ գրությունների այդ հատվածը: (Տե՛ս Մոսիա 12.25–27:) Ի՞նչ է նշանակում մեր սրտերը նվիրել հասկանալուն:
- Ի՞նչ է նշանակում ունենալ պատվիրանները «գրված [մեր] սրտերում» (Մոսիա 13.11): Սրտում գրված պատվիրանները ինչպե՞ս կարող են օգնել մեզ հնազանդվել դրանց:
- Ի՞նչ սովորեցիք Փրկչի մասին Մոսիա 14-ում մեջբերված մարգարեությունից:
- Իր քարոզի վերջում ի՞նչ կոչ արեց Աբինադին Նոյին և նրա քահանաներին: (Տե՛ս Մոսիա 16.13–15:) Ինչպե՞ս կարող եք օգտագործել այդ խորհուրդը ձեր կյանքում:
- Թեպետև դուք, հավանաբար, կարիք չեք ունենա զոհվել ձեր հավատքի համար, այնուամենայնիվ, ինչպե՞ս կարող եք հետևել Աբինադիի օրինակին:

Առաջարկություն ընտանեկան քննարկման համար

Ամբողջ ընտանիքով կազմեք այն մարդկանց ցուցակը, որոնք Աբինադիի նման առաջարկել են իրենց ուղերձը Հիսուս Քրիստոսի Քավության մասին՝ չնայած իրենց սպառնացող մեծ վտանգին (օրինակների համար տե՛ս Գործք Դ.1–12; 1 Նեփի 1.18–20; Մոսիա 18.1–2; Հելաման 13.1–7): Եթե ճանաչում եք դժվար պայմաններում միսիոներական աշխատանք կատարող ընտանիքի անդամների, խոսեք նրանց փորձի մասին: Ընտանիքի անդամներին խրախուսեք օրագրերում գրի առնել իրենց փորձը:

«Ոչ մեկը ի զորու չեղավ նրանց ազատել, բացի Տիրոջից» 19

Մոսիա 18–24

Մոսիա 18 գլուխը պարունակում է մկրտության ուխտերի բացատրությունը: Այս գլուխն ուսումնասիրելուց առաջ կարդացեք Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի հետևյալ խոսքերը.

«Ուխտը պայմանագիր և համաձայնություն է առնվազն երկու կողմերի միջև: Ավետարանի դեպքում այդ կողմերն են՝ Տերը և երկրային մարդիկ: Մարդիկ համաձայնվում են պահել պատվիրանները, իսկ Տերը խոստանում է համապատասխանաբար հատուցել նրանց» (in Conference Report, Oct. 1970, 91; or *Improvement Era,* Dec. 1970, 26):

- Ի՞նչ ենք մենք խոստանում անել, երբ մկրտվում ենք: (Տե՛ս Մոսիա 18.8–13; Մորոնի 6.2–3; Վ և Ու 20.37:) Ի՞նչ է խոստանում Տերը, երբ մենք մկրտվում ենք և պահում մեր մկրտության ուխտը: (Տե՛ս Մոսիա 18.10, 12–13; տե՛ս նաև 2 Նեփի 31.17:)

- Ինչո՞ւ Տերը գերության մեջ գտնվող Ալմայի ժողովրդին օրհնեց ավելի արագ ու ավելի առատորեն, քան Լիմքիի ժողովրդին: (Համեմատե՛ք Մոսիա 21.5–15 և Մոսիա 23.26–27; 24.10–16:) Ինչպե՞ս է սա վերաբերվում մեր կյանքին:
- Ինչո՞ւ է մեր բեռն ավելի թեթև դառնում, երբ մենք "զվարթությամբ և համբերատարությամբ հնազանդվում ենք Տիրոջ ողջ կամքին» (Մոսիա 24.15): Ի՞նչ եղանակներով է Տերն ամրացնում մեզ, որպեսզի «մեր բեռները հեշտությամբ տանենք»:
- Ի՞նչ կարող ենք սովորել Լիմքիի ժողովրդի և Ալմայի ժողովրդի փորձից մեղքի կապանքներից ազատվելու մասին: (Տե՛ս Մոսիա 7.33; 21.14; 23.23; 29:18–20; տե՛ս նաև Վ և Ու 84.49–51:)

Առաջարկություն ընտանեկան քննարկման համար

Քննարկեք մկրտության ուխտի մասին նախորդ էջում տրված հարցերը : Ընտանիքի մկրտված անդամներին հրավիրեք կիսվել մկրտության հետ կապված իրենց հիշողություններով:

«Իմ հոգին այլևս չի ցավում» 20

Մոսիա 25–28; Ալմա 36

Մոսիա 25–28 և Ալմա 36 գլուխներն ընդգրկում են Ալմայի և Մոսիայի որդիների հրաշքով դարձի գալու պատմությունը: Այս գլուխներն ուսումնասիրելիս մտածեք ձեր դարձի գալու մասին:

- Ինչո՞ւ է կարևոր «ներել միմյանց»: (Մոսիա 26.31): Ինչպե՞ս եք օրհնվել, երբ ներել եք մեկ ուրիշին, կամ, երբ մեկ ուրիշը ներել է ձեզ:
- Ինչո՞ւ Տերը հրեշտակ ուղարկեց Ալմա Կրտսերի և նրա ընկերների հետ խոսելու համար: (Տե՛ս Մոսիա 27.14:) Ինչպե՞ս աղոթքը կարող է մեզ օգնել այն պահերին, երբ մեր սիրելի մարդիկ հեռանում են ավետարանից:

Մոսիա 27–ում և Ալմա 36–ում նշեք այն խոսքերը և արտահայտությունները, որոնք համեմատում են Ալմայի զգացմունքները ներումից առաջ և հետո: (Օրինակ, տե՛ս Մոսիա 27.29: Ներում ստանալուց առաջ Ալմայի «հոգին պրկվել էր հավերժական տանջանքից»: Ներում ստանալուց հետո նրա «հոգին այլևս [չէր] ցավում:)

Առաջարկություն ընտանեկան քննարկման համար

Ընտանիքի անդամներին ուղղեք հետևյալ հարցը.

- Ի՞նչ կարևոր բաներ պետք է հաշվի առնել միսիային նախապատրաստվելու համար: (Ընտանիքի անդամներին օգնեք հասկանալ, որ ավելի կարևոր է, թե *ինչու* և *ինչպես* ենք ծառայում, քան *որտեղ* ենք ծառայում:)

Ընտանիքի անդամներին խնդրեք անցնել Մոսիա 28–ին: Բացատրեք, որ այս գլուխը պատմում է Մոսիայի որդիների մասին, որոնք ցանկանում էին որպես միսիոներներ ծառայել Լամանացիներին:

- Ինչո՞ւ էին Մոսիայի որդիները ցանկանում քարոզել Լամանացիներին: (Տե՛ս Մոսիա 28.2–3:) Ինչպե՞ս մենք կարող ենք ավելի մեծ նվիրվածությամբ քարոզել ավետարանը:

«Ալման . . . դատում էր արդար դատավճիռներ» 21

Մոսիա 29; Ալմա 1–4

Երբ Մոսիա թագավորի բոլոր որդիները հրաժարվեցին Մոսիայից հետո թագավոր դառնալ, Մոսիան ժողովրդին գրավոր հռչակագիր ուղարկեց, առաջարկելով իր մահից հետո փոխարինել թագավորների կառավարումը դատավորների համակարգով: Մոսիա 29 ուսումնասիրելիս մտածեք այն մասին, թե ինչ են սովորեցնում Մոսիա թագավորի խոսքերը այն ղեկավարների մասին, որոնք կօգնեն «ապահովել ժողովրդի խաղաղությունը» (Մոսիա 29.10):

- Դատավորների կառավարման հինգերորդ տարում Ներոր անունով մի մարդ բերվեց Ալմայի առջև դատվելու համար (Ալմա 1.1–2, 15): Ի՞նչ էր սովորեցնում Ներորը ժողովրդին: (Տե՛ս Ալմա 1.3–4:) Ո՞րն էր նրա այդ ուսմունքի արդյունքը: (Տե՛ս Ալմա 1.5–6:) Ձեր կարծիքով, ինչո՞ւ էին Ներորի ուսմունքները դուր գալիս շատերին: Նմանատիպ ի՞նչ ուսմունքներ եք լսում մեր օրերում:
- Ի՞նչ արեց Ալման ի պատասխան մարդկանց մեջ աճող հպարտությանը և անօրինություններին: (Տե՛ս Ալմա 4.15–19:) Աստծո խոսքի քարոզումը ինչպես կարող է «զարթնեցնել [մարդկանց] ի հիշողություն իրենց պարտականությունների» և ինչպես կարող է «տապալել» հպարտությունը, նենգությունը և հակառակությունները:

Առաջարկություն ընտանեկան քննարկման համար

Ամբողջ ընտանիքով կարդացեք Ալմա 4.15–20: Այնուհետև հարցրեք.

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ Ալման մարդկանց օգնելու այլ եղանակ չուներ, բացի «բերելով պարզ վկայություն նրանց դեմ»: Ինչպիսի՞ խնդիրներ կարելի է լուծել այսօր աշխարհում ավետարանը քարոզելու և դրանով ապրելու միջոցով:

«Ընդունե՞լ եք դուք նրա պատկերը ձեր դեմքին» 22

Ալմա 5–7

Ալմա 5 գլուխը պարունակում է ավելի քան 40 հարց: Գտեք այդ հարցերը և մտածեք դրանց պատասխանների մասին:

- Զարահեմլայի ժողովրդին ուղղված իր ուղերձում Ալման խոսեց սրտի զորեղ փոփոխության և Աստծուց ծնված լինելու մասին (Ալմա 5.14): Այդ փորձի մասին խոսելիս մենք հաճախ ենք օգտագործում «դարձի գալ» արտահայտությունը : Ի՞նչ է նշանակում դարձի գալ: (Տե՛ս Մոսիա 5.2; 27.24–26:)

Առաջարկություն ընտանեկան քննարկման համար

Ամբողջ ընտանիքով կարդացեք Ալմա 5.14, 19: Բացատրեք, որ *դեմք* բառը վերաբերվում է անձի պահվածքին կամ այն եղանակին, որով այն արտահայտում է իր բնավորությունը:

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում «ունենալ Աստծո պատկերը փորագրված [մեր] դեմքերի վրա»: Ի՞նչ եք տեսել այլ մարդկանց մեջ, որը ցույց է տվել, որ նրանք «ընդունել են նրա պատկերը [իրենց] դեմքին»:

«Ավելի, քան մեկ վկա» 23

Ալմա 8–12

- Եկեղեցու կարգը Գեդէոնի և Մելեքի ժողովրդի մեջ հաստատելուց հետո Ալման գնաց քարոզելու Ամմոնիայի երկիրը: Ի՞նչ դժվարությունների նա հանդիպեց Ամմոնիայում: (Տե՛ս Ալմա 8.8–9:)
- Ալմա 8.10–ում ո՞ր խոսքերն են նկարագրում Ամմոնիայում Ալմայի ջանքերի ուժգնությունը: Ինչպե՞ս արձագանքեց Ամմոնիայի ժողովուրդը Ալմայի քարոզին: (Տե՛ս Ալմա 8.11–13:)

Ալմա 8.18–32 և Ալմա 10–11 ուսումնասիրելիս փնտրեք այն հատվածները, որոնք նկարագրում են, թե ինչպես փոխվեց Ամուղեկը, երբ հնազանդվեց հրեշտակի ուղերձին և ծառայեց որպես Ալմայի ուղեկից:

- Ինչպե՞ս է մեր սրտի տրամադրվածությունը ազդում Աստծո խոսքի ճիշտ ըմբռնման վրա: (Տե՛ս Ալմա 12.9–11:) Ինչպե՞ս կարող ենք այնպիսի սիրտ ունենալ, որպեսզի ճանաչենք, հասկանանք և ընդունենք Աստծո խոսքը: (Տե՛ս 1 Նեփի 2.16; 15.11:)

Առաջարկություն ընտանեկան քննարկման համար

Բացատրեք, որ, երբ Ալման միայնակ գնաց Ամոնիա, մարդիկ ասացին. «Ո՞վ է Աստված, որ ուղարկում է ոչ ավելի հեղինակություն, քան մեկ մարդ այս ժողովրդի մեջ» (Ալմա 9.6): Հետագայում, երբ Ամուղեկը սկսեց քարոզել նրանց, մարդիկ զարմացան, տեսնելով, որ «կար ավելի, քան մեկ վկա» (Ալմա 10.12): Ընտանիքով կարդացեք հետևյալ սխեմայի վրա պատկերված սուրբ գրությունները: Նշեք, ինչպես Ալման և Ամուղեկը շարունակեցին աջակցել միմյանց նույն վարդապետությունը քարոզելու իրենց ջանքերում:

Վարդապետություն	Ամուղեկի վկայությունը	Ալմայի վկայությունը
Քավություն	Ալմա 11.40	Ալմա 12.33–34
Ապաշխարություն	Ալմա 11.40	Ալմա 12.24
Դատաստան	Ալմա 11.41	Ալմա 12.14
Հարություն	Ալմա 11.41–42	Ալմա 12.24–25

- Ավետարանը քարոզելիս ո՞րն է մեկից ավելի վկաներ ունենալու առավելությունը: Ինչպե՞ս մենք կարող ենք աջակցել միմյանց այդ գործում:

«Տուր մեզ ուժ ըստ մեր հավատքի, որը Քրիստոսում է» 24

Ալմա 13–16

Այն բանից հետո, երբ Ալման Ամմոնիայում Զիզրոմին և ուրիշներին սովորեցրեց փրկագնման ծրագրի մասին, նա վկայեց քահանայության և կարգման վարդապետության մասին: Ալմա 13.1–7 ուսումնասիրելիս կարդացեք հետևյալ մեջբերումները.

Զոզեֆ Սմիթ Մարգարեն ասել է. «Ամեն մարդ, որ կանչվում է ծառայելու աշխարհի բնակիչներին, նա այդ նպատակի համար արդեն կարգվել է երկնքում տեղի ունեցած Մեծ Խորհրդի ժամանակ՝ նախքան այս աշխարհի արարումը» (*Teachings of the Prophet Joseph Smith,* sel. Joseph Fielding Smith [1976], 365):

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալը սովորեցրել է. «Մեր այստեղ գալուց առաջ, հավատարիմ կանայք որոշակի հանձնարարություններ են ստացել, իսկ հավատարիմ տղամարդիկ նախապես կարգվել են քահանայության որոշակի գործեր կատարելու: Թեպետև մենք այժմ չենք հիշում մանրամասները, սա չի փոխում փառավոր իրականությունը այն բանի, ինչին մենք համաձայնվել ենք անցյալում: Դուք պատասխանատու եք այն բաների համար, որոնք ակնկալվել են ձեզանից շատ ժամանակ առաջ: Նույնքան պատասխանատու են նրանք, ում մենք աջակցում ենք որպես մարգարեներ և առաքյալներ» (“The Role of Righteous Women,” *Ensign,* Nov. 1979, 102):

- Շատ օրերի ընթացքում բանտում հալածանքների ենթարկվելուց հետո ինչպե՞ս Ալման և Ամուղեկը վերջապես ազատվեցին : (Տե՛ս Ալմա 14.26–29; Եթեր 12.12–13:) Ի՞նչ բաներից մենք կարիք ունենք ազատվելու: Ինչո՞ւ մեր հավատը պետք է կենտրոնանա Քրիստոսի շուրջը, որ առաջնորդի մեզ դեպի ազատություն: (Տե՛ս Մոսիա 3.17; Մորոնի 7.33:)
- Ի՞նչ է խոսվում Ալմա15.3–5-ում Ալմայի և Ամուղեկի հանդեպ Զիզրոմի վստահության մասին: Ո՞ւմ պետք է ապավիներ Զիզրոմը բուժվելու համար: (Տե՛ս Ալմա 15.6–10:) Ի՞նչ դուք սովորեցիք բժշկվելուց հետո Զիզրոմի արարքներից: (Տե՛ս Ալմա 15.11–12:)

Առաջարկություն ընտանեկան քննարկման համար

Ալմա13–16 ամբողջությամբ կամ մասամբ վերանայելուց հետո ընտանիքի յուրաքանչյուր անդամի խնդրեք կիսվել այդ պատմությունից իր սովորածով:

«Նրանք սովորեցնում էին Աստծո զորությամբ և իշխանությամբ» 25

Ալմա 17–22

- Ի՞նչը օգնեց Ամմոնին և նրա եղբայրներին Լամանացիներին բերել դեպի ճշմարտության գիտելիքը: Ի՞նչ եք դուք սովորում միսիոներական աշխատանքի հանդեպ ունեցած Ամմոնի և Ահարոնի վերաբերմունքից:
- Ի՞նչ վարդապետություններ էին սովորեցնում Ամմոնը և Ահարոնը Լամոնի թագավորին և նրա հորը: (Տե՛ս Ալմա 18.34–39; Ալմա 22.7–14:)
- Ի՞նչ զոհաբերություններ էր պատրաստ կատարել Լամոնիի հայրը Աստծուն ճանաչելու համար: (Տե՛ս Ալմա 22.15, 17–18:) Ի՞նչ կարող եք սովորել նրա օրինակից:

Ալմա 17–22 ուսումնասիրելիս փնտրեք այն մարդկանց պատմությունները, որոնք օրհնություններ են ստացել փորձություններին դիմակայելու արդյունքում: Մտածեք այն օրհնությունների մասին, որոնք դուք ստացել եք այն բանի համար, որ հավատքով և համբերությամբ դիմացել եք փորձություններին:

Առաջարկություն ընտանեկան քննարկման համար

Ցուցադրեք մի քանի տարբեր գործիքներ: Ընտանիքի անդամներին խնդրեք բացատրել, յուրաքանչյուր գործիքի օգտագործման նպատակը: Այնուհետև կարդացեք Ալմա 17.1–9 և նշեք, որ Մոսիայի որդիների նման մենք նույնպես կարող ենք գործիք լինել Աստծո ձեռքում, եթե կիսվենք ավետարանով ուրիշների հետ: Շեշտե՛ք, որ Տերը կօգնի մեզ, եթե մենք աշխատենք գործիք լինել Նրա ձեռքում:

«Դարձի բերվեցին առ Տերը»

26

Ալմա 23–29

Ալմա 23–27 պատմում է Անթի-Նեփի-Լեքիների մասին, մարդկանց մի խմբի, որոնք այնքան խորապես դարձի եկան, որ «երբեք չհեռացան» (Ալմա 23.6): Այս պատմությունը կարդալիս գտեք այն փաստերը, որոնք ապացուցում են Անթի-Նեփի-Լեքիների դարձի գալու ճշմարտացիությունը և անկեղծությունը:

- Անթի-Նեփի-Լեքիները «դարձի եկան առ Տերը» (Ալմա 23.6): Ինչո՞ւ է կարևոր, որպեսզի Հիսուս Քրիստոսը լինի մեր դարձի գալու հիմքը:
- Դարձի եկած Լամանացիները որոշեցին տարբերվել իրենց եղբայրներից, որոնք անարդար մնացին (Ալմա 23.16–18; 27.27–30:) Ինչպե՞ս մենք կարող ենք տարբերվել աշխարհից, երբ դարձի ենք գալիս:
- Ունենալով այդքան դժվարություններ, ինչի՞ համար էին երախտապարտ Անթի-Նեփի-Լեքիները: (Տե՛ս Ալմա 24.7–10:) Ինչպե՞ս մենք կարող ենք երախտապարտ լինել Աստծուն, որն օգնում է մեզ դիմակայել անկախ մեր փորձություններից և դժվարություններից:
- Անթի-Նեփի-Լեքիները «վերցրեցին իրենց սրերը . . . թաղեցին դրանք խորը՝ հողի մեջ» (Ալմա 24.15–17): Ինչո՞ւ է այդքան կարևոր, որ նրանք հողի մեջ թաղեցին իրենց զենքերը, այլ ոչ թե պարզապես խոստացան չօգտագործել դրանք: Ի՞նչ մենք կարող ենք անել, որ թաղենք մեր «ընբոստության զենքերը»:

Ալմա 26–27 ուսումնասիրելիս փնտրեք այն օրհնությունները, որոնք տրվում են միսիոներներին իրենց ջանքերի արդյունքում:

Առաջարկություն ընտանեկան քննարկման համար

Օգտվեք Անթի-Նեփի-Լեքիների դարձի գալու պատմությունից: Այս բաժնի հարցերը օգտագործեք քննարկում ծավալելու համար: Այնուհետև ընտանիքի անդամներին խնդրեք կարդալ դարձի գալու մասին հետևյալ հատվածները.

Դուկաս ԻԲ.32	Ալմա 5.7–14
Մոսիա 5.2 3	Նեփի 6.14
Մոսիա 5.7 3	Նեփի 9.13–14

«Բոլոր բաները մատնանշում են՝ կա՛ Աստված»

27

Ալմա 30–31

Ալմա 30–31 գլուխներն ուսումնասիրելիս հիշեք Նախագահ Էզրա Թավտ Բենսոնի խոսքերը.

«Մորմոնի Գիրքը բացահայտում է Քրիստոսի թշնամիներին . . . Մորմոնի Գրքում նկարագրված ուրացությունները նման են մեր օրերի ուրացություններին: Իր խորաթափանց կանխատեսությամբ Աստված այնպես է կազմել Մորմոնի Գիրքը, որպեսզի մենք այսօր կարողանանք ճանաչել սխալը և իմանալ ինչպես պայքարել կրթական, քաղաքական, կրոնական և փիլիսոփայական կեղծ գաղափարների դեմ» (“The Book of Mormon Is the Word of God,” *Ensign,* Jan. 1988, 3):

- Երբ Կորիհորը Աստծո գոյության համար ապացույց խնդրեց, ի՞նչ նշան ցույց տվեց նրան Ալման ի ապացույց, որ Աստված կա: (Տե՛ս Ալմա 30.44:) Այս ապացույցները ինչպե՞ս ամրապնդեցին ձեր հավատքը:

Ալմա 31 գլուխն ուսումնասիրելիս համեմատեք Զորամացիների աղոթքը Ալմայի աղոթքի հետ: Կարող եք նշել տարբերությունները:

Առաջարկություն ընտանեկան քննարկման համար

Բացատրեք, որ Կորիհորի ուսմունքների նման գաղափարներ այսօր ևս երբեմն առաջ են քաշվում մարդկանց կողմից: Այնուհետև քննարկեք հետևյալ հարցերը.

- Ի՞նչ մենք կարող ենք անել դիմակայելու այն մարդկանց ազդեցությանը, որոնք փորձում են կործանել մեր հավատը: (Պատասխանները կարող են ընդգրկել սուրբ գրությունների ուսումնասիրությունը, աղոթքը, հակառակություններից խոսափելը, ծնողների, եպիսկոպոսի կամ այլ վստահված ընկերների հետ զրույցները:)

«Խոսքը ի փրկություն՝ Քրիստոսում է» 28

Ալմա 32–35

- Ալման Աստծո խոսքը համեմատում է սերմի հետ (Ալմա 32.28): Ի՞նչ մենք կարող ենք անել, որպեսզի տեղ տանք մեր սրտում Աստծո խոսքին: (Ալմա 32.28):
- Կարդացեք Ալմա 32.28–35: Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում զգալ, որ խոսքը «ուռչում է ձեր կրծքում»: Ինչպե՞ս են սուրբ գրությունները մեծացնում ձեր հոգին, լուսավորում ձեր հասկացողությունը և զարգացնում ձեր միտքը: Ինչպե՞ս է Աստծո խոսքը հրաշալի եղել ձեզ համար:
- Ալմայի քարոզը լսելուց հետո, մարդիկ ցանկացան իմանալ «ինչ ձևով նրանք պետք է սկսեին գործադրել իրենց հավատքը» (Ալմա 33.1): Ալման պատասխանեց, մեջբերելով Զենոս, Զենոք և Մովսես մարգարեների ուսմունքները: Ո՞րն էր այդ ուսմունքների հիմնական ուղերձը: (Տե՛ս Ալմա 33.3–22:)

Ալմա 33.19–22 գլուխներն ուսումնասիրելուց հետո կարդացեք Թվոց ԻԱ.4–9, Հովհաննես Գ:1–16, 1 Նեփի 17.41, Ալմա 37.46, և Հելաման 8.13–15: Այդ հատվածների համակցումը ինչպե՞ս կարող է ձեզ ավելի մեծ ներշնչում տալ, քան առանձին հատվածները:

Առաջարկություն ընտանեկան քննարկման համար

Օգնեք ընտանիքի անդամներին պատկերացնել մեր սրտում Աստծո խոսքը սնուցելու մասին Ալմայի ուղերձը (Ալմա 32.28–43), ընտանիքի յուրաքանչյուր անդամի տվեք մեկական սերմ և հողով մի փոքր անոթ: Խնդրեք նրանց տնկել սերմը և սնուցել այն ջրով և արևի լույսով: Հաջորդ մի քանի շաբաթների ընթացքում հետևեք սերմերի աճին:

«Ականջ դիր իմ խոսքերին» 29

Ալմա 36–39

- Ալմա 36–39 գլուխները պարունակում են իր որդիներ Հելամանին, Սիբլոնին և Կորիանթոնին ուղղված Ալմայի վկայությունը: Ինչո՞ւ է կարևոր, որպեսզի երեխաները լսեն իրենց ծնողների վկայությունները: Ինչպե՞ս են ձեր ծնողների վկայությունները ազդել ձեզ վրա:

Վերանայեք սուրբ գրությունների հետևյալ հատվածները, որոնք շեշտում են ծնողների կողմից երեխաներին խորհուրդ տալու կարևորությունը.

Ալմա 36–39	Ալմա 57.21, 26–27
2 Նեփի 1–3	Հելաման 5.5–14
Ենովս 1.1–3	Վ և Ու 68.25–28
Մոսիա 1.1–8	Վ և Ու 93.39–50
Ալմա 56.47–48	

- Ինչպե՞ս է փոխվել ձեր կյանքը, երբ դուք աշխատել եք հետևել Ալմա 37.36–37–ում տրված խորհրդին:
- Կորիանթոնի մեղքերը ի՞նչ ազդեցություն ունեցան ուրիշների վրա: (Տե՛ս Ալմա 39.11, 13:) Ինչո՞ւ է կարևոր, որպեսզի Եկեղեցու անդամները լավ օրինակ ծառայեն: Ձեր գործերը ինչպե՞ս կարող են ազդել Եկեղեցու մասին ուրիշների կարծիքի վրա:

Առաջարկություն ընտանեկան քննարկման համար

Ընտանիքի անդամներից մեկին խնդրեք կարդալ Ալմա 37.6–7: Այնուհետև ցույց տվեք մի մեխ, հեղույս կամ որևէ այլ փոքր առարկա, որով կարելի է երկու իր ամրացնել:

- Ինչո՞ւ է այդ առարկան «փոքր և պարզ»: Ինչպե՞ս կարելի է օգտագործել այդ առարկան մեծ գործեր կատարելու համար: Ի՞նչ կարող էր պատահեր, եթե չունենայինք այդ առարկան:
- Որո՞նք են այն «փոքր և պարզ» բաները, որ ամրացնում են ընտանիքը: Ի՞նչ «փոքր և պարզ» բաներ մենք կարող ենք անել, որպես ընտանիք, արտահայտելու համար մեր սերը Երկնային Հոր, Հիսուս Քրիստոսի և միմյանց նկատմամբ:

«Երջանկության մեծ ծրագիրը» 30

Ալմա 40–42

- Ի՞նչ է պատահում մեր հոգիների հետ մահվան և հարության միջև ընկած ժամանակահատվածում: (Տե՛ս Ալմա 40.11–15, 21; տե՛ս նաև Վ և Ու 138:)
- Ի՞նչ կարող էր պատահել մեզ հետ, եթե մենք միայն արդարադատությանը ենթակա լինեինք: (Տե՛ս Ալմա 42.14:) Ի՞նչ է պահանջվում արդարադատության պահանջները բավարարելու համար, որպեսզի կրկին բնակվենք Երկնային Հոր ներկայության մեջ: (Տե՛ս Ալմա 42.15:) Հիսուս Քրիստոսի Քավությունը ինչպե՞ս է «բավարարելու արդարության պահանջները»: (Տե՛ս Մոսիա 15.7–9:) Ի՞նչ մենք պետք է անենք, որպեսզի կարողանանք ստանալ Աստծո ողորմածության լիությունը: (Տե՛ս Ալմա 42.13, 23, 27, 29–30; տե՛ս նաև Ալմա 41.14; Վ և Ու 19.15–18:)

Առաջարկություն ընտանեկան քննարկման համար

Օգնելու համար ընտանիքի անդամներին հասկանալ Ալմա 42, կարդացեք Միջնորդի

մասին Երեց Բոյդ Ք. Փաքերի առակը, որը կարելի է գտնել *Ավետարանի Սկզբունքներ*-ի 12 գլխում (31110): Կարող եք ընտանիքի տարբեր անդամների խնդրել կարդալ պատմողի, պարտապանի, պարտատիրոջ և պարտապանի ընկերոջ հատվածները:

«Հաստատուն Քրիստոսի հավատքում» 31

Ալմա 43–52

Ալմա 43–52 պատմում է պատերազմների մասին: Այս հատվածները կարող են մեզ սովորեցնել, թե ինչպես վարվել աշխարհիկ հակառակություններում, ինչպես պաշտպանել մեզ և մեր ընտանիքները Սատանայի դեմ պայքարում:

- Մտածեք հետևյալ սկզբունքների մասին, որոնցով պատերազմների ժամանակ առաջնորդվում էին արդար Նեփիացիները: Այս սկզբունքները հասկանալը և կիրառելը ինչպե՞ս կարող են օգնել այսօր աշխարհն ավելի խաղաղ դարձնել: Ինչպե՞ս կարող եք կիրառել այս սկզբունքները ձեր անձնական կյանքում:

  ա. Պայքարեք միայն արդար նպատակի համար, օրինակ՝ ինքնապաշտպանության համար (Ալմա 43.8–10, 29–30, 45–47; 48.14):

  բ. Ատելություն մի ունեցեք ձեր թշնամու հանդեպ, հաշվի առեք ինչպես ձեր, այնպես էլ նրա շահերը (Ալմա 43.53–54; 44.1–2, 6):

  գ. Ապրեք արդար և ապավինեք Աստծուն (Ալմա 44.3–4; 48.15, 19–20):

  դ. Հետևեք արդար և իմաստուն ղեկավարներին (Ալմա 43.16–19; 48.11–13, 17–19; տե՛ս նաև Վ և Ու 98:10):

Առաջարկություն ընտանեկան քննարկման համար

Կարդացեք հրամանատար Մորոնիի մասին, որը բարձրացրեց ազատության դրոշը (Ալմա 46:12–20): Այնուհետև ամբողջ ընտանիքով ստեղծեք ձեր ազատության դրոշը: Ընտանիքի անդամներին խնդրեք թվարկել մի քանի կարևոր սկզբունքներ, որոնք կարող են հիշեցնել և ոգևորել նրանց՝ վերցնել իրենց վրա Հիսուս Քրիստոսի անունը: Այնուհետև այդ սկզբունքները գրի առեք մի մեծ թղթի վրա: Ընտանիքի անդամներին խրախուսեք ապրել համաձայն այն սկզբունքների, որոնք գրված են ձեր ընտանիքի ազատության դրոշի վրա:

«Նրանք հնազանդվում . . . էին ճշգրիտ կատարել հրամանի ամեն մի բառը» 32

Ալմա 53–63

Ալմա 53 և 56–58 գլուխներն ուսումնասիրելիս գտեք այն սկզբունքները, որոնց հետևում էին 2,060 պատանի զինվորները, և այն հատկանիշները, որ նրանք զարգացրել էին իրենց պատանեկության ժամանակ: Հատուկ ուշադրություն դարձրեք նրան, թե ինչպես այդ սկզբունքները և հատկանիշները օգնեցին պատանի զինվորներին ուժ ստանալ Տիրոջից: Որոշեք, ինչպես կարող եք կիրառել այդ սկզբունքները ձեր կյանքում:

- Ումի՞ց էին այդ երիտասարդ Ամմոնացիները սովորել այդքան մեծ հավատ և քաջություն ունենալ: (Տե՛ս Ալմա 56.47–48; տե՛ս նաև Ալմա 53.21; 57.21:) Ինչո՞ւ է կարևոր, որպեսզի երեխաները իմանան իրենց ծնողների վկայությունների զորությունը և վստահությանը:

Ուսումնասիրեք մայրության մասին հետևյալ սուրբ գրությունները.

Ալմա 56.47–48	1 Ա Թագավորաց Ա.27–28
Ծննդոց ԻԴ.60	Առակաց Ա.8
Ելից Ի.12	Մովսես 4.26

- Երիտասարդ Ամմոնացիները խնդրեցին Հելաման մարգարեին լինել իրենց առաջնորդը (Ալմա 53.19; 56.1, 5): Ինչպե՞ս նրանք արձագանքեցին ստացած հրահանգներին: (Տե՛ս Ալմա 57.21:) Ի՞նչ հատուկ բաներ դուք պետք է անեք, որպեսզի «ճշգրիտ» ձևով հետևեք մարգարեին:

Առաջարկություն ընտանեկան քննարկման համար

Պատմեք Հելամանի և 2,060 պատանի զինվորների պատմությունը (Ալմա 53; 56–58): Այնուհետև ընտանիքի անդամներին խնդրեք կարդալ ստորև նշված հատվածները: Քննարկեք, թե ինչպես ընտանիքի անդամները կարող են կիրառել այդ հատվածներում տրված սկզբունքները:

Ալմա 53.20–21	Ալմա 57.25–27
Ալմա 56.45–48	Ալմա 58.6–11
Ալմա 57.21	Ալմա 58.39–40

Որպես քննարկման մի մաս կարող եք միասին երգել *"We'll Bring the World His Truth"* օրհներգը *(Children's Songbook, 172):*

«Հաստատուն հիմք» 33

Հելաման 1–5

Հելաման 1–4 նկարագրում է Նեփիացիների և Լամանացիների միջև եղած խաղաղության և հակառակության ժամանակշրջանները: Հելաման 5 գլուխը պատմում է Լամանացիների և Նեփիացիների պառակտիչների մեջ կատարած հրաշալի միսիոներական աշխատանքի մասին: Այս հատվածները ուսումնասիրելիս զուգահեռներ անցկացրեք մեր այսօրվա օրերի հետ:

- Ինչպե՞ս արձագանքեցին հալածանքին Քրիստոսի խոնարհ հետևորդները: (Տե՛ս Հելաման 3.33–35:) Ինչպե՞ս այս օրինակը կարող է օգնել ձեզ:
- Կարդացեք Հելաման 5.12: Ի՞նչ է նշանակում կառուցել Քրիստոսի վեմի վրա: (Տե՛ս նաև 3 Նեփի 14.24–27:)

Մորմոնի Գրքում ավելի քան 240 դեպքերում *հիշել* բառը օգտագործվում է տարբեր ձևերով (օրինակ՝ *հիշել, հիշողություն* կամ *չմոռանալ*): Հելաման 5-ում գտեք այդ բառի օգտագործման 15 դեպք և մտածեք, թե ինչո՞ւ է *հիշել* բառը կարևոր Տիրոջ ուխտի ժողովրդի համար:

Առաջարկություն ընտանեկան քննարկման համար

Բարձրաձայն կարդացեք Հելաման 5.12: Այնուհետև քննարկեք այն եղանակները, որոնց միջոցով ձեր ընտանիքը կարող է կառուցել իր հիմքը Հիսուս Քրիստոսի վեմի վրա:

Այս քննարկման ժամանակ կարող եք միասին երգել «Աստծո Սրբեր» օրհներգը (*Օրհներգեր,* հ. 85):

«Ինչպես կարողացաք մոռանալ ձեր Աստծուն» 34

Հելաման 6–12

Հելաման 6–12 գլուխները ցույց են տալիս, թե ինչպես է հպարտության մեղքը ներգործում մարդկանց վրա: Այս հատվածներն ուսումնասիրելիս առաջարկություն ընտանեկան քննարկման համար բաժնում գտեք նկարագրված ցիկլը:

- Կարդացեք Հելաման 12.7: Ի՞նչը հիմք հանդիսացավ Մորմոնի այդ հայտարարության համար: (Տե՛ս Հելաման 12.1–6, 8:)

Առաջարկություն ընտանեկան քննարկման համար

Թղթի վրա նկարեք հետևյալ սխեման.



Բացատրեք, որ Մորմոնի Գիրքը պարունակում է այս ցիկլը անցած մարդկանց մի քանի օրինակներ:

- Ինչպե՞ս մենք կարող ենք դուրս գալ այս ցիկլից: (Ընտանիքի անդամներին խնդրեք կարդալ Ալմա 62.48–51; Հելաման 12.23–24:)

Թղթի վրա գիծ քաշեք *Հպարտություն և Ամբարշտություն* և *Կործանում և Տառապանք* բառերի միջև: Նշեք, որ մենք կարող ենք սովորել Նեփիացիների սխալների վրա: Անգամ եթե մենք բարգավաճում ենք, մենք միշտ կարող ենք հիշել Տիրոջը խոնարհության և երախտագիտության զգացումով:

«Ապաշխարել ու վերադառնալ դեպի Տերը» 35

Հելաման 13–16

Նախագահ Էզրա Թավտ Բենսոնն ասել է. «Փրկչի գալստին նախորդող Նեփիական պատմության մասին հիշատակարանը բազմաթիվ զուգահեռներ է բացահայտում մեր օրերի հետ, երբ մենք սպասում ենք Փրկչի երկրորդ գալստին» (in Conference Report, Apr. 1987, 3; or *Ensign*, May 1987, 4):

Հետևյալ սխեման ցույց է տալիս, որ Հելաման 13–16 գլուխները պարունակում են մարգարեություններ և իրադարձություններ, որոնք նման են Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալստին նախորդող նշաններին և դեպքերին.

Հելաման 13–16 գլուխների մարգարեությունները և իրադարձությունները	Մարգարեություն կամ Իրադարձություն	Նշաններ և իրադարձություններ, որոնք կնախորդեն Երկրորդ Գալստին
Հելաման 16.1, 3, 6, 10	Ամուր արդար փոքրամասնություն	1 Նեփի 14.12; Հակոբ 5.70
Հելաման 16.13–14	Հոգևոր զեղումներ և հրաշքներ	Յովէլ Բ. 28–30; Վ և Ու 45.39–42
Հելաման 13.22; 16.12, 22–23	Մեծ ամբարշտություն	2 Տիմոթեոս Գ.1–5; Վ և Ու 45.27
Հելաման 13.2, 6, 8, 10–11; 14.9, 11; 15.1–3, 17; 16.2	Տիրոջ մարգարեների և ապաշխարության նրանց կոչերի մերժում	Վ և Ու 1.14–16
Հելաման 14.3–4	Մարգարեություն առանց խավարի գիշերվա մասին	Զաքարիա ԺԴ.7; տե՛ս նաև *Մարգարե Ջոզեֆ Սմիթի Ուսմունքները,* sel. Joseph Fielding Smith [1976], 287
Հելաման 14.5–6, 20	Մարգարեություններ երկնքից նշանների և հրաշքների մասին	Յովէլ Բ. 30–31; Վ և Ու 45.40
Հելաման 16.13–18	Նշանների, հրաշքների և Քրիստոսի գալստի մերժում	Բ Պետրոս Գ.3–4; Վ և Ու 45.26

Առաջարկություն ընտանեկան քննարկման համար

Ամբողջ ընտանիքով ուսումնասիրեք բոլոր այս սխեմաները կամ դրանցից մի քանիսը: Ընտանիքի անդամներից յուրաքանչյուրին խնդրեք կիսվել նրանով, թե ինչպես կարող է այս սխեմայի տեղեկությունը օգնել մարդկանց պատրաստվել Երկրորդ Գալստին:

«Էգուց ես գալիս եմ աշխարհ» 36

3 Նեփի 1–7

- Սպասելով Սամուելի մարգարեությունների իրականացմանը «այն մարդիկ, ովքեր հավատում էին, սկսեցին շատ տրտմել» (3 Նեփի 1.7): Ի՞նչ պատճառներ կային նրանց վշտի համար: (Տե՛ս 3 Նեփի 1.5–9:) Ի՞նչ արեցին հավատացյալները, չնայած իրենց հավատքը այդքան դժվարությունների հանդիպեց: (Տե՛ս 3 Նեփի 1.8:) Ի՞նչ կարող եք անել հաստատակամ մնալու համար, երբ ձեր հավատը փորձվում է:
- Կարդացեք 3 Նեփի 3.12–26, որտեղ Նեփիացիները պատրաստվում են հարձակվել Գադիանթոնի ավազակների վրա: Վտանգի պահերին Նեփիացիների վարքը ինչպե՞ս կարող է ձեզ օգնել պաշտպանվել փորձության և վախի ժամանակ:

- Ի՞նչ օրհնություններ կարող էին վայելել բոլոր մարդիկ, եթե պահպանեին իրենց հավատը: (Տե՛ս 3 Նեփի 10.18–19:)

Առաջարկություն ընտանեկան քննարկման համար

Ամբողջ ընտանիքով կարդարցեք 3 Նեփի 5.13: Բացատրեք, որ այս հատվածը պարունակում է Մորմոն մարգարեի խոսքերը: Այնուհետև հարցրեք.

- Ի՞նչ է նշանակում լինել «Հիսուս Քրիստոսի աշակերտը»: (Հետևել Հիսուս Քրիստոսին:) Ի՞նչ մենք կարող ենք անել անհատապես և ամբողջ ընտանիքով Փրկչին հետևելու համար:

Որպես քննարկման մի մաս կարող եք միասին երգել «Արի, հետևիր ինձ» (*Օրհներգեր,* հ. 116) կամ «ես կլինեմ Հիսուսի պես» երգերը *(Children's Songbook, 78–79):*

«Ով որ գա, նրան ես կընդունեմ» 37

3 Նեփի 8–11

Սամուէլ մարգարեն մարգարեացել է Փրկչի Խաչելության նշանների մասին: Հելաման 14. 20–27–ում կարդացեք նրա մարգարեությունները: Այնուհետև այդ մարգարեությունների իրականացման մասին կարդացեք 3 Նեփի 8–9 գլուխներում:

- Ինչպիսի՞ հրավերք է տալիս Տերը նրանց, ովքեր փրկվում են մեծ ավերվածությունից: (Տե՛ս 3 Նեփի 9.13–14: Նշեք, որ 14 հատվածում *գալ* բառը երեք անգամ է հանդիպում:) Ի՞նչ մենք կարող ենք անել այդ հրավերքը ընդունելու համար:
- Բազմությունը «մեկ առ մեկ» մոտեցավ Փրկչին (3 Նեփի 11.15; տե՛ս նաև 3 Նեփի 17.25, որտեղ ասվում է, որ այդտեղ ներկա էին 2500 մարդ:) Ի՞նչ եք սովորում այս օրինակից Փրկչի սիրո մասին:
- Հիսուսը սովորեցնում էր, որ «ոչ մի վիճաբանություն» չպիտի լինի մարդկանց մեջ (3 Նեփի 11.22, 28): Ինչո՞ւ են վտանգավոր ավետարանային վարդապետության շուրջ հակառակությունները: (Տե՛ս 3 Նեփի 11.29; Վ և Ու 10.62–63:) Ինչպե՞ս մենք կարող ենք միավորվել ճշմարիտ վարդապետության շուրջ:

Առաջարկություն ընտանեկան քննարկման համար

Ընտանիքով կարդացեք 3 Նեփի 11.1–17: Ընտանիքի անդամներին խնդրեք մտածել այն մասին, թե ինչպես իրենց կզգային, եթե լինեին Նեփիացիների մեջ, երբ հայտնվեց հարություն առած Տերը:

«Հին բաներին վերջ տրվեց և բոլոր բաները դարձան նոր» 38

3 Նեփի 12–15

3 Նեփի 12–15 գլուխներում Փրկչի ուսմունքները ուսումնասիրելիս, գտեք այն ուսմունքները, որոնց կարիքը դուք զգում եք:

Հիսուսը Նեփիացիներին ասաց. «Ես տալիս եմ ձեզ՝ լինելու երկրի աղը» (3 Նեփի 12.13): Այդ հայտարարության իմաստն ավելի լավ հասկանալու համար, կարդացեք հետևյալ հատվածները: Ձեր

սուրբ գրություններում կարող եք նշել այդ հատվածները:

Ղևտացոց Բ.13	Վ և Ու 101.39-40
Մաթէոս Ե.13	Վ և Ու 103.9–10

- Կարդացեք 3 Նեփի 12.48: Ինչո՞ւ կատարյալ դառնալու համար մենք Հիսուս Քրիստոսի Քավության կարիքն ունենք: (Տե՛ս 2 Նեփի 2.7–9; 3 Նեփի 19.28–29; Մորոնի 10.32–33:)

Առաջարկություն ընտանեկան քննարկման համար

Ընտանիքի անդամներին մատուցեք ուտելիք, որը ըստ բաղադրատոմսի աղ պետք է պարունակի: Ընտանիքի յուրաքանչյուր անդամի մատուցեք մեկ բաժին աղ պարունակող ուտելիք և մեկ բաժին՝ առանց աղի: Նրանք կտեսնեն, թե ինչպես է աղը ուտելիքն ավելի համեղ դարձնում:

Մութ սենյակում լապտեր կամ մոմ վառեք:

Այդ ներկայացումներից հետո քննարկեք, թե ինչ է նշանակում լինել «երկրի աղը» և «մարդկանց լույսը» (3 Նեփի 12.13–14):

«Ահա, իմ ցնծությունը լիակատար է» 39

3 Նեփի 17–19

3 Նեփի 17–19 գլուխներն ուսումնասիրելիս գտեք այն հատվածները, որոնք ցույց են տալիս Հիսուսի սերը: Ձեր զգացմունքները կարող եք գրի առնել ձեր օրագրերում:

- Ինչո՞ւ Հիսուսը «մի քիչ էլ» մնաց ժողովրդի հետ: (Տե՛ս 3 Նեփի 17.5–6:) Ինչպե՞ս է դա ցույց տալիս մարդկանց հանդեպ Նրա սերը: Ինչպե՞ս եք զգացել ձեր հանդեպ Հիսուսի սերը և ձեր մասին Նրա մտահոգությունը:
- Նեփիացիներին Իր այցի ժամանակ Հիսուսը սպասավորեց հաղորդությունը: 3 Նեփի 18.1–11-ից ի՞նչ սովորեցիք հաղորդության արարողության մասին: Ի՞նչ մենք կարող ենք անել՝ մեզ պատրաստելու ամեն կիրակի օր հաղորդություն ընդունելու համար:
- Հիսուսը սովորեցնում էր. «Աղոթեք Հորը ձեր ընտանիքներում» (3 Նեփի 19.21): Ընտանեկան աղոթքն ի՞նչ ազդեցություն է գործել ձեր ընտանիքի վրա: Ինչպե՞ս կարող են ընտանիքները պարտավորվել օրական ընտանեկան աղոթքներ ասել:

Սուրբ գրությունները բարձրաձայն կարդալով վարդապետությունների և իրադարձությունների մասին այնպիսի ներշնչումներ կարող եք ստանալ, որոնք չեք կարող ձեռք բերել մտքում կարդալու ժամանակ: Բարձրաձայն կարդացեք 3 Նեփի 17: Կարդալիս ուշադիր եղեք, որպեսզի զգաք Հոգու ազդեցությունը: Կարող եք նշել ձեզ համար հատկապես կարևոր հատվածները:

Առաջարկություն ընտանեկան քննարկման համար

Նեփիացիների մոտ գտնվելու երկու օրերի ընթացքում Փրկիչը ծառայեց երեխաներին: Ընտանիքով կարդացեք 3 Նեփի 17.11–24 և 26.14–16: Այնուհետև զրուցեք փոքր երեխաների հանդեպ Հիսուսի սիրո մասին:

«Եվ այդ ժամանակ կհավաքեմ ես նրանց» 40

3 Նեփի 16; 20–21

3 Նեփի 16, 20 և 21 գլուխները պարունակում են Հիսուս Քրիստոսի ուսմունքները, որոնք Նա տվեց Նեփիացիներին, երբ այցելեց նրանց Իր Հարությունից հետո: Այս գլուխներում Տերը սովորեցնում և մարգարեանում է վերջին օրերում ավետարանի Վերականգնման և Իսրայելի տան հավաքման մասին:

- Ինչո՞ւ ցրվեց Իսրայելը: (Տե՛ս 3 Նեփի 16.4:) Ի՞նչ է իրենից ներկայացնում Իսրայելի հավաքումը: (Տե՛ս 3 Նեփի 16.4, 12; 20.10–13:)
- Ի՞նչ դեր ունի Մորմոնի Գիրքը Իսրայելի հավաքման գործում: (Օրինակների համար համեմատեք 3 Նեփի 16.4, 12 և 20.10–13 գլուխները 1 Նեփի 6.3–4-ի և Մորմոնի Գրքի տիտղոսաթերթի հետ:) Որպես Եկեղեցու անդամներ որո՞նք են ձեր պարտականությունները Իսրայելի հավաքման գործում:

Առաջարկություն ընտանեկան քննարկման համար

Սենյակում ցրված տարբեր առարկաներ դրեք: Այնուհետև ընտանիքի անդամներին խնդրեք հավաքել այդ առարկաները: Կարող եք նշել, որ *հավաքել* բառը նշանակում է ի մի հավաքել:

Երբ ընտանիքի անդամները կհավաքեն առարկաները, կարդացեք 3 Նեփի 20.12–13 գլուխները: Բացատրեք, որ Երկնային Հայրն ամբողջ աշխարհում հավաքում է Իր ժողովրդին բերելով նրանց «Աստծո իմացությանը, որը փրկագնել է նրանց»: Քննարկեք, թե ինչ կարող եք անել անհատապես և ամբողջ ընտանիքով՝ օգնելու համար Երկնային Հորը հավաքել Իր ժողովրդին:

«Նա մեկնաբանեց նրանց բոլոր բաները» 41

3 Նեփի 22–26

- Եսայիա մարգարեի մարգարեությունները մեջբերելուց հետո Հիսուսը մարդկանց պատվիրեց «ջանասիրաբար քննել այս բաները» (3 Նեփի 23.1): Ի՞նչ է նշանակում քննել սուրբ գրությունները, այլ ոչ թե պարզապես կարդալ դրանք:
- Իր հիշատակարանում Մորմոնն ընդգրկեց «փոքրագույն մասը» այն բաների, որ Հիսուսը սովորեցրեց (3 Նեփի 26.8): Ինչպե՞ս մենք կարող ենք ստանալ «ավելի մեծ բաները»: (Տե՛ս 3 Նեփի 26.9:)
- Կարդացեք 3 Նեփի 26:19–21: Ինչպե՞ս մենք կարող ենք հետևել այս օրինակին մեր ամուսնական կյանքում, ընտանիքներում, ծխերում և ցցերում:

Առաջարկություն ընտանեկան քննարկման համար

Բացատրեք, որ, երբ Հիսուսը Նեփիացիների հետ էր, Նա կիսվեց Եղիայի առաքելության մասին տրված Մաղաքիայի մարգարեություններով (3 Նեփի 25.1–6): Այս ուսմունքն այնքան կարևոր է, որ իր տեղն է գտել Եկեղեցու բոլոր չորս ստանդարտ աշխատանքներում:

Ամբողջ ընտանիքով կարդարցեք սուրբ գրությունների հետևյալ հատվածները. Մաղաքիա Դ.1–6; Ղուկաս Ա.17; 3 Նեփի 25.1–6; Վարդապետություն և Ուխտեր 2.1–3; և Ջոզեֆ Սմիթ – Պատմություն 1.37–39: Կարող եք ընտանիքի անդամներին առաջարկել իրենց սուրբ գրություններում նշել այդ հատվածները:

Քննարկեք, թե ինչպես են այդ հատվածները առնչվում ընտանեկան պատմության և տաճարային աշխատանքների հետ: Ծրագրեր կազմեք, որպեսզի միասին աշխատեք գտնել մահացած նախնիների անունները՝ նրանց համար տաճարային ծեսեր կատարելու համար: Եթե պայմանները թույլ են տալիս, ծրագրեք միասին տաճարում ծառայություն կատարել:

«Այս է իմ ավետարանը» 42

3 Նեփի 27–30; 4 Նեփի

- Տասներկու աշակերտները Հիսուսին հարցրեցին, թե ինչպես նրանք պետք է անվանեն Նրա Եկեղեցին (Տե՛ս 3 Նեփի 27.3): Ինչպե՞ս Նա պատասխանեց նրանց հարցին: (Տե՛ս 3 Նեփի 27.4–9:) Տերը պատվիրեց, որպեսզի Իր վերականգնված Եկեղեցին, ինչպես և Իր Եկեղեցին Նեփիացիների մոտ, կոչվի Իր անունով (Վ և Ու 115.4): Ինչո՞ւ է կարևոր, որպեսզի մենք հիշենք, որ Եկեղեցին կոչվել է Հիսուս Քրիստոսի անունով:
- Ուսումնասիրեք 3 Նեփի 27.13–21, փընտրելով Հիսուս Քրիստոսի ավետարանի տարբեր ասպեկտները: Ի՞նչ Փրկիչը խոստացավ նրանց, ովքեր կապրեն համաձայն Իր ավետարանի: (Տե՛ս 3 Նեփի 27.21–22:)
- Ի պատասխան իրենց խնդրանքի Նեփիացի երեք աշակերտներ փոխակերպվեցին, այսինքն, նրանց մարմինները ժամանակավորապես փոխվեցին, որպեսզի նրանք կարողանան տեսնել Աստծո բաները (տե՛ս 3 Նեփի 28.13–15): Այնուհետև նրանք փոխակերպվեցին: Ի՞նչ է ասվում 3 Նեփի 28–ում փոխակերպված էակների մասին:
- Հիսուսի այցից հետո շատ տարիների ընթացքում չկային ոչ մի «ձևի –ացիներ» (4 Նեփի 1.17): Ի՞նչ է դա նշանակում: (Տե՛ս 4 Նեփի 1.2–3, 15–17:) Ինչպիսի՞ խնդիրներ են առկա այսօր մարդկանց խմբերի միջև գոյություն ունեցող տարբերությունների պատճառով: Ինչպե՞ս կարող է ավետարանը մեզ օգնել միավորվել՝ անկախ մեր տարբերություններից:

Առաջարկություն ընտանեկան քննարկման համար

Միասին կարդացեք 4 Նեփի: 1–19 հատվածները կարդալիս կազմեք այն վարվելակերպի և գործերի ցուցակը, որոնք տանում են դեպի խաղաղություն և երջանկություն: 20–46 հատվածները կարդալիս գրեք այն վարվելակերպի և գործերի ցուցակը, որոնք տանում են դեպի հակառակություններ և կործանում:

Համեմատեք ձեր կազմած ցուցակները: Քննարկեք, թե ինչպես կարող եք ընտանիքով նմանվել 4 Նեփի 1.1–19-ում նկարագրված մարդկանց:

«Ինչպե՞ս կարողացաք հեռանալ Տիրոջ ուղիներից» 43

Մորմոն 1–6; Մորոնի 9

- Երբ Մորմոնը 15 տարեկան էր, նրան «այցելեց Տերը, և նա ճաշակեց և իմացավ Հիսուսի բարության մասին» (Մորմոն 1.15): Ինչպե՞ս ենք մենք գալիս Հիսուսի բարության մասին իմացությանը:
- Ինչպիսի՞ պայմաններ էին տիրում Նեփիացիների հասարակարգում Մոր-

մոնի կյանքի ժամանակ: (Տե՛ս Մորմոն 1.19; 2.1, 8, 10, 18:) Թեպետև Մորոնիի նման մենք ապրում ենք մեծ անարդարության ժամանակներում, ինչպես կարող ենք պահպանել մեր հավատը և անձնական արդարությունը:

- Մորմոնն ասել է, որ, երբ նրա ժողովուրդը պաշտպանվում էր Լամանացիներից, «նրանք գիտակցեցին, որ դա Տերն էր, որ խնայեց նրանց» (Մորմոն 3.3): Ինչո՞ւ է կարևոր, որպեսզի մենք հասկանանք, որ օրհնությունները մենք ստանում ենք Տիրոջից: (Տե՛ս Մորմոն 3.9:)
- Կարդացեք Մորմոն 5.17–18: Փրկչին չհետևող մարդկանց ինչպե՞ս կարելի է համեմատել առանց առագաստի կամ խարսխի նավի հետ: Ինչպե՞ս է ավետարանը ձեզ համար որպես առագաստ և խարիսխ ծառայում:

Առաջարկություն ընտանեկան քննարկման համար

Ընտանիքով կարդացեք Մորմոն 1.13–14 և 2.18: Այնուհետև կարդացեք Մորմոն 1.15 և 2.19: Շեշտեք, որ, անգամ եթե մենք անարդարությամբ ենք շրջապատված, մենք կարող ենք ճանաչել Տիրոջ բարությունը: Եթե մենք Մորմոնի նման ձգտենք հետևել Տիրոջը և հավատարիմ մնանք ավետարանի մասին մեր վկայությանը, ապա կարող ենք հույս գտնել, իմանալով, որ «պիտի բարձրացվենք վերջին օրը» (Մորմոն 2.19):

«Ես խոսում եմ ձեզ հետ, կարծես դուք ներկա լինեք» 44

Մորմոն 7–9

Մորմոն 7–9 ուսումնասիրելիս հիշեք, որ այս գլուխների բոլոր ուսմունքները ուղղված են վերջին օրերում ապրող մարդկանց:

- Ի՞նչ մարգարեացավ Մորոնին աշխարհում տիրող պայմանների մասին այն ժամանակ, երբ Մորմոնի Գիրքը կտրվի աշխարհից: (Տե՛ս Մորմոն 8.26–33:) Ինչո՞ւ էր Մորոնին կարողանում այդքան հստակ մարգարեանալ վերջին օրերի մասին: (Տե՛ս Մորմոն 8.34–35:)
- Ի՞նչ էր ասում Մորոնին վերջին օրերում հպարտության մասին: (Տե՛ս Մորմոն 8.35–41:)
- Մորոնին ասաց, որ վերջին օրերին ոմանք կհավատան, որ Տերը «հրաշքների Աստված չէ» (Մորմոն 9.10): Եթե որևէ մեկը ձեզ ասի, որ Տերը հրաշքների Աստված չէ, ինչպե՞ս դուք կպատասխանեք: Ինչպիսի՞ փորձով դուք կկիսվեք վկայելու համար, որ Տերը հրաշքների Աստված է:

Առաջարկություն ընտանեկան քննարկման համար

Ընտանիքով կարդացեք Մորմոն 8.34–35: Այնուհետև յուրաքանչյուրին խնդրեք այնպիսի նամակ գրել ընտանիքի ապագա անդամներին (օրինակ՝ երեխաներին, թոռներին, զարմիկներին), որ, կարծես, «այդ ընտանիքի անդամները» ներկա լինեին: Առաջարկեք, որպեսզի նրանք իրենց նամակներում ընտանիքի ապագա անդամներին խորհուրդներ տան, որոնք կօգնեն նրանց ապրել համաձայն ավետարանի, անկախ այն դժվարություններից, որոնց նրանք կհանդիպեն: Կարող եք նաև առաջարկել, որպեսզի նամակները ապահով տեղ պահվեն, օրինակ՝ օրագրերի մեջ, ապագայում դրանք կարդալու համար:

«Երբեք մարդը չի հավատացել ինձ, ինչպես դու» 45

Եթեր 1–6

- Երբ Հարեղի եղբայրը Տիրոջը հարցրեց, թե ինչպես լուսավորի նավակները, ի՞նչ պատասխանեց Տերը: (Տե՛ս Եթեր 2.23–25:) Ինչո՞ւ է կարևոր Տիրոջից օգնություն խնդրելուց առաջ անել հնարավորին ամեն ինչ:
- Իրեն Հարեղի եղբորը ցույց տալուց առաջ, ի՞նչ հարց տվեց Տերը: (Տե՛ս Եթեր 3.11:) Ինչպե՞ս Հարեղի եղբոր պատասխանը արտահայտեց նրա հավատի խորությունը: (Տե՛ս Եթեր 3.12:) Ի՞նչ կարող ենք անել՝ նրա օրինակին հետևելու համար:

Առաջարկություն ընտանեկան քննարկման համար

Միասին կարդացեք Եթեր 6.1–12: Օգտագործեք հետևյալ հարցերը օգնելու ընտանիքի անդամներին գտնել դեպի խոստումի երկիր Հարեդացիների ճանապարհորդության և կյանքում մեր ճանապարհորդության միջև նմանությունները:

- Տերն այնպես արեց, որ նավակների քարերը «փայլեցին խավարում» (Եթեր 6.3): Ի՞նչ լույսեր է Տերը տվել մեզ:
- Ի՞նչ արեցին Հարեդացիները նրանից հետո, երբ ամբողջովին պատրաստվեցին իրենց ճանապարհորդությանը: (Տե՛ս Եթեր 6.4:) Ինչպե՞ս եք դուք նույնպիսի վստահություն ցուցաբերում Տիրոջ հանդեպ:
- Երբ քամիները փչում էին և Հարեդացիները առաջ էին մղվում, ի՞նչ էին նրանք անում օր ու գիշեր: (Տե՛ս Եթեր 6.8–9:) Ինչպե՞ս մենք կարող ենք գովաբանել Տիրոջը:
- Ի՞նչ արեցին Հարեդացիները, երբ ժամանեցին խոստումի երկիր: (Տե՛ս Եթեր 6.12:) Ինչո՞վ կարող է դա նման լինել Երկնային Հոր մոտ մեր վերադարձին:

«Հավատքով են բոլոր բաները կատարվում» 46

Եթեր 7–15

- Ինչպե՞ս Եթերը նկարագրեց նրանց, ովքեր հավատ ունեին առ Աստված: (Տե՛ս Եթեր 12.4:) Ինչպե՞ս կարող է հավատը և հույսը ձեզ համար խարիսխ լինել: Մի քանի օրինակներ բերեք, երբ հավատը բարին գործերի է մղում, որոնք իրենց հերթին փառավորում են Աստծուն:
- Ինչպե՞ս Մորոնին սահմանեց հավատը: (Տե՛ս Եթեր 12.6:) Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում «նախքան մեր հավատքի փորձությունը» մենք վկայություն չենք ստանում: Ինչպիսի՞ ճանապարհներով են փորձությունները ամրացրել և հաստատել ձեր հավատը:
- Տերը սովորեցրել է, որ, երբ մենք խոնարհեցնում ենք մեզ Նրա առաջ և հավատ ենք ունենում առ Նա, ապա Նա մեր «թույլ կողմերը կդարձնի ուժեղ» (Եթեր 12.27): Ինչպե՞ս է այս խոստումը իրականանում սուրբ գրություններում, ձեր և ուրիշների կյանքում:

Առաջարկություն ընտանեկան քննարկման համար

Երբ Հայրում Սմիթը պատրաստվում էր գնալու Քարթրիջի բանտը, որտեղ նա և Մարգարե Ջոզեֆ Սմիթը սպանվեցին, նա կարդաց Եթեր 12.36–38 և ծալեց այդ էջը (Վ և Ու 135.4–5): Ընտանիքի անդամներին խնդրեք կարդալ այդ հատվածները:

- Ինչպիսի՞ մխիթարություն են առաջ բերում այս հատվածները: Սուրբ գրությունների ո՞ր հատվածներն են ամրացրել և մխիթարել ձեզ:

«Պահելու նրանց ճշմարիտ ուղու վրա» 47

Մորոնի 1–6

- Ինչո՞ւ են Մորոնիի Գրքի 2–5 գլուխները կարևոր մեր օրերի համար: Տեսնելով, որ միևնույն ժեսերը առկա են Տիրոջ Եկեղեցու տարբեր ժամանակաշրջաններում, ինչպե՞ս եք դուք ամրանում:
- Ի՞նչ ուխտեր ենք մենք կապում հաղորդության ժամանակ: (Տե՛ս Մորոնի 4.3; 5.2:) Ի՞նչ է մեզ խոստացվել դրա համար: Ի՞նչ եք դուք զգում, երբ հաղորդությունը ընդունում եք պատկառանքով և արժանապատվորեն:
- Այն ամենից հետո, երբ մարդիկ մկրտվեցին և ստացան Սուրբ Հոգու պարգևը, «նրանք համարվում էին Քրիստոսի Եկեղեցու ժողովրդի թվում. և նրանց անունները գրի էին առնվում» (Մորոնի 6.4): Ինչո՞ւ էին նրանց անունները գրի առնվում: (Տե՛ս Մորոնի 6.4:) Ինչպիսի՞ ճանապարհներով դուք կարող եք աջակցել Եկեղեցուն տեսնելու, որ և՛ հին, և՛ նոր անդամները «հիշվեցին և սնվեցին Աստծո բարի խոսքով»:

Առաջարկություն ընտանեկան քննարկման համար

Եթե ընտանիքի անդամները նորադարձներ են, քննարկեք, թե ի՞նչ էին նրանք զգում, երբ միանում էին Եկեղեցուն: Ընտանիքի անդամներին թույլ տվեք խոսել այն ամենի մասին, ինչ նրանց դուր է եկել, երբ միացել են Եկեղեցուն, և այն խնդիրների մասին, որոնց նրանք հանդիպել են, երբ միացել են Եկեղեցուն: Եթե ընտանիքի անդամները Եկեղեցու հին անդամներ են եղել, հարցրեք, թե ինչպես նրանք կզգային, եթե առաջին անգամ գային Եկեղեցի:

Ընտանիքի անդամներից մեկին խնդրեք կարդալ Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի հետևյալ խորհուրդը.

«Նորադարձների թվի այս չտեսնված աճի պայմաններում մենք պետք է ավելի մեծ ջանքեր գործադրենք՝ օգնելու նրանց գտնել իրենց ուղին: Նրանցից յուրաքանչյուրը երեք բանի կարիք ունի. ընկերոջ, պատասխանատվության և սնվելու «Աստծո բարի խոսքով» (Մորոնի 6.4)» (in Conference Report, April 1997, 66; or *Ensign*, May 1997, 47):

- Ի՞նչ մենք կարող ենք անել այս խորհրդին հետևելու համար:

«Եկե՛ք դեպի Քրիստոսը»

48

Մորոնի 7–8; 10

Մորոնի 7–8 գլուխները պարունակում են Մորոնիի հոր՝ Մորմոնի ուսմունքները: Մորոնի 10 գլուխը պարունակում է Մորոնիի վերջին գրավոր վկայությունը:

- Մորմոնը Եկեղեցու անդամներին անվանում է «Քրիստոսի խաղաղ հետևորդներ» (Մորոնի 7.3): Ի՞նչ հիմքեր ուներ Մորմոնը նման դատողության: (Տե՛ս Մորոնի 7.4–5:) Ինչպե՞ս ենք մենք դառնում «Քրիստոսի խաղաղ հետևորդներ»:
- Մորոնին ավարտում է իր հիշատակարանը «հորդորանքի ձևով մի քանի խոսք խոսելուց հետո» (Մորոնի 10.2): «Հորդորել» բառը նշանակում է խստորեն խորհուրդ տալ կամ կոչ անել: Մորոնի 10 ուսումնասիրելիս ամեն անգամ հորդորել բառը հանդիպելիս կարող եք նշել այն: Խորհեք այս գլխում Մորոնիի հորդորանքի նշանակության և կարևորության մասին:
- Ի՞նչ է Մորոնին սովորեցնում հոգևոր պարգևների մասին: (Տե՛ս Մորոնի 10.8–19:)
- Մորոնիի հորդորանքը՝ «գալ դեպի Քրիստոսը» ինչպե՞ս է արտահայտում Մորմոնի Գրքի ողջ ուղերձը: (Մորոնի 10.30, 32): Նշեք այն հատուկ ճանապարհները, որոնց միջոցով Մորմոնի Գրքի այս տարվա ուսուցանումը օգնեց ձեզ գալ դեպի Քրիստոսը:

Առաջարկություն ընտանեկան քննարկման համար

Բերեք ձեր վկայությունը Մորմոնի Գրքի մասին և ընտանիքի անդամներին առաջարկեք անել նույնը: Այնուհետև կարդացեք Նախագահ Էզրա Թավտ Բենսոնի հետևյալ խոսքերը.

«Մորմոնի Գիրքն ուսումնասիրվում է Կիրակնօրյա մեր դպրոցներում և ճեմարաններում չորս տարին մեկ անգամ: Սակայն, Եկեղեցու անդամները իրենց անձնական և ընտանեկան ուսումնասիրության համար չպետք է հետևեն չորս տարին մեկ անգամ գիրքն ուսումնասիրելու այդ եղանակին: Մենք ամեն օր պետք է կարդանք գրքի էջերից, որն իր սկզբունքներով մարդուն ավելի է մոտեցնում Աստծուն, քան որևէ այլ գիրք» (*History of the Church,* 4:461); (in Conference Report, Oct. 1988, 3; or *Ensign,* Nov. 1988, 4):

Դասարանի անդամներին խրախուսեք շարունակել Մորմոնի Գրքի ուսումնասիրությունը և կոչ արեք կիսվել դրանով ուրիշների հետ:

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

ARMENIAN
4 02356 84201 1
35684 201